№ 2 (215) XXI ՏԱՐԻ ՓԵՏՐՎԱՐ 1911

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԲԱՍՏԻԼԸ ԵՒ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ներարդային շրջան ենք ապրում—և պէտք է պատրաստ լինենք ամեն տեսակ անակնկալների համար։ Դրութիւնը անկայուն է մեր գործունէութեան բոլոր վայրերում—Ռուսաստանում, Պարսկաստանում, Թիւրքիայում։ Առաջինը ծփում է յեղափոխական խմորումների մէջ, վերջինները մշակւում են հակայեղափոխական պրօպագանդով։ Մի տեղ պէտք է պատրաստ լինենք լուրջ ու պատուով դիմաւորելու նոր, ազատարար շարժումներին, միւս տեղերում պէտք է հսկենք... բռնապետութեան յարձակողական վերադարձի դէմ։ Այդ „վերադարձի" վտանգը պիտի յարատևէ, քանի դեռ Թիւրքիոյ ու Պարսկաստանի վարիչները կը յամառեն իրենց կոպիտ և գրգռիչ դիքտատորական ընթացքի մէջ, քանի դեռ նրանք կը մերժեն հպատակ ազգութիւններին ու աշխատաւոր ժողովուրդներին ամենատարրական իրաւունքներն ու անհրաժեշտ բարենորոգումները, քանի դեռ, վերջապէս, այդ երկու պետութիւնների շուրջը կը վխտան բաղաքակիրթ ու կապիտալիստ աշխարհի բորենիները, իրենց անդուլ որոնումով և յօշոտող ախորժակներով։

Առ այժմ հայ ժողովրդի ուշադրութեան ու մտահոգութիւնների կենտրոնը Կովկասն է—Ստոլիպինի և Լիժինի ստեղծագործած բանտային դժոխքը, որ երեք տարուայ կեանք ունի արդէն և որ այդ կարճ (համեմատաբար) ժամանակամիջոցում վկայ է եղել մի շարք բարբարոս տեսարանների—մահւան դէպքերի, երիտասարդ, հիւծուող կեանքերի և անգամ խելագարութեան։ Երևան, Գանձակ, Բագու, Թիֆլիս, Նովոչերկասկ — մի մի տանջարաններ, ուր հայ երիտասարդութեան լաւագոյն տարրերը ենթարկւած են տարիներից ի վեր ամենանախիղճ հաւատաքննութեան։

Բանտարկեալները տանում են իրենց խաչը ստոյիկեան արիութեամբ. բողոքի խուլ մրմունջը դուրս է սողում բանտային պարիսպներից, սլանում է դէպի հեռուն, հայ աշխարհի բոլորը ծայրերը և ամենուրեք հայ ժողովուրդը արձագանք է տալիս, միացնում է իր բողոքի ու ցասման մրմունջները, որդեգրում է բանտարկեալների դասը և բերում նրանց իր եղբայրական օգնութիւնը։ Սրտառուչ են համաժողովրդային այդ գիտակից միութեան ցոյցերը, մխիթարական է այդ ներդաշնակ արձագանքը, որ հնչում է ամերիկահայ գաղութներից, Բուլգարիայից, Թիւրքահայաստանի մի քանի վայրերից, Պարսկաստանից—յօգուտ տանջւող եղբայրակցի, բռնակալութեան շղթայակապ զոհերի։

Հանդիսաւոր մի առիթ է դա և խրախուսիչ ու սքրտապնդող մի երևոյթ՝ ուր միանգամ ևս հայ ժողովուրդը ջնջում է աշխարհագրական սահմանները, ժխտում է ռուսահայի, թիւրքահայի ու պարսկահայի խտրողական տարբերութիւնները և շեշտում է իր անպառակտելի ու անկապտելի ամբողջութիւնը՝ մի ընդհանուր ու նիւթական դատի շուրջը։

*

Նոյնչափ խրախուսիչ չէ մեր մամուլի և „հասարակութեան" մի հատուածի բռնած դիրքը։

Դասալիքներ եղել են ամեն շրջանում։ Նրանք եղել են մեր նորագոյն պատմութեան ամենասուր, ամենացաւոտ դրւագներում իսկ։ Եղել են անտարբերներ, ստրկամիտ թուլամորթներ, գիտակից ու անգիտակից դաւաճաններ։ Եւ նրանց թիւը լեգէօն էր։ Ամենացնցող տագնապների օրերում անգամ—երբ համայնքի լինելը լինելու խնդիր էր տրւում—այդ լեգէօնը վատնում էր միշտ լիակատար անշահախնդրութիւն ու անտարբերութիւն՝ կեանքի և կուի անողոք հրամայականների առջև։ Դրանով էլ նա չէր բաւականանում։ Թառած իր անփոյթ չէզոքութեան բարձունքներում՝ նա անխնայ ոմբակոծում էր հայ ժողովրդական դրամայի գործողներին, որոնք նետւում էին արկածների մէջ, դնելով քարտէզի վրայ իրենց ապագան, իրենց բովանդակ անձնաւորութիւնը, իրենց կեանքը։

Այդպէս էր մեր չարաշուք և մահաբոյր անցեալը։ Մահը բուրում էր հայ յեղափոխականի բազմաչարչար երեսին—թէ դրսից և թէ ներսից, թէ թշնամուց, թէ հարազատից... Նա գնաց իր ճանապարհը՝ դիմագրաւելով երկուսին էլ։ Նա լողաց երկար՝ արիւնաներկ յորձանքն ի վեր և դուրս լողաց յաղթանակով։ Եւ նրան թւաց, թէ ազատութեան արևի համատարած ճառագայթների տակ ամեն բան մէկէն ի մէկ փոխեց իր գոյնն ու բնոյթը, թէ փոխւեց անգամ այն դաւաճան

„Հասարակութիւնը“, որ հալածել էր նրան երկար տարիներ, իր պաղ, անգութ անտարբերութեամբ։ Նրան թւաց, թէ այդ գորշ, անհրապոյր զանգուածը, որ կոչւում է „Հայկական հասարակութիւն“, գէթ այսուհետև, ազդուելով ազատական հովերից, կ'առներ փոքր ինչ քաղաքացիական արիութիւն ու կորով և այլևս ծանրագոյն վայրկեաններում չէր լքի դաւաճանորէն... Նրանց, որոնք բեմ են նետուել պայքարելու ամենատարրական մարդկային և ազգային իրաւունքների համար։

Ոչինչ չի փոխուել, ամեն ինչ մնում է ըստ հնոյն։ Հայ հասարակութիւն և հայ յեղափոխական — նոյն հակամարտ կատեգորիաները։ Երեք տարուց ի վեր ժանդարմական վարչութիւնը սանձարձակ և անխնայ ճարակում է կովկասը ծայրէ-ծայր։ Անդադրում խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ քաղաքներում ու գաւառներում, լոկ մատնիչի ցուցմունքներով, լոկ կասկածով, առանց փաստի, հիմքերի։ Վարչական կամայականութիւնը մինչև երկինք է աղաղակում։ Քննիչ Լիժինը իր հայատեաց ու դաշնակցատեաց մոլեգնութեամբ՝ անցնում է ամեն չափ։

Հասարակութիւնը նիրհում է սարկական մրափի մէջ։ Նրա հոգը չէ, երբ բանտերը լցւում են անմեղներով, երբ վայրենի խուճապը քանդում է գիւղացիական տնտեսութիւնը, խլելով ընտանիքներից երիտասարդ ուժերը և փտեցնելով բանտերում։ Նրա հոգը չէ անգամ, երբ հայ գրողին կենդանի թաղել են ուզում Լիժինի ոճրանոցում, երբ նրա տանջանքի ու յուսահատութեան մորմոքը հասնում է քաղաքակիրթ մարդկութեան և յարուցանում կարեկցող ու վեհանձն միջամտութիւններ։ Նրա հոգը չէ, վերջապէս, թէ շուտով պիտի կատարւի սօլիպինեան հռչակաւոր „արդարադատութիւնը“ հայ բանտարկեալների գլխին, նա ոչինչ չի ձեռնարկում՝ գէթ մեղմելու գալոց հարուածը, նա գուցէ նոյնիսկ ուրախ կը լինէր, որ այդ հարուածը տեղար ուժեղ, անագորոյն.. Նա չի միջամտի՝ անգամ օրինական միջոցներով, հեռու բանտի, կախաղանի, անգամ կասկածի վտանգներից։

Այդ բուռ ու քստմնելի „լէգէօնը“—որի մէջ հազուադէպ բացառութիւն են շիտակ ու սրտցաւ անհատները—ուզում է ի զ ե լ ամեն կապ, համերաշխութիւն բանտարկեալների հետ, և նա խզում է դէմօնստրատիվ, ցուցարար ձևով. խզում է հրապարակօրէն, յաչս ամբողջ կառավարութեան... Նա ամեն առթիւ հաստատեց, փաստաբանեց, որ անդունդ կայ Նօվօչերկասսկի բանտարկեալների և հայկական հասարակութեան միջև, որ կայ անդունդ նոյնիսկ... հ ա յ ժ ո ղ ո վ ր դ ի և այդ բանտարկեալների միջև... Այդպէս քանիցս կարդացինք... Նոյնիսկ մամուլի մէջ։ Չենք մոռանայ...

Վատ լէգէօնը ունեցաւ իր վատ մամուլը։ Մենք երբէք էլ չենք հայցել այդ մարդկանց համակրութիւնն ու պաշտպանութիւնը, բայց տեղիք ունէինք սպասելու, որ այս ծանր օրերի մէջ գէթ կը կարողանային սանձահարել իրենց յոռի, հակահասարակական բնազդները և չը հայհոյել, չ'արատաւորել բանտարկեալների դատը։ Ոչ, մենք չէինք պահանջում այդ դժգոյն ու թուլամորթ զանգուածից քաղաքացիական քաջութեան minimum-ն անգամ, բայց գէթ հանգիստ թողնէին համեստ գործիչ-աշխատաւորներին, գէթ ազատ թողնէին իրենց անարգ գաղտասուքներից այն մարմինը, որի հետ հայ ժողովրդի դահիճները կապել են ուզում Նօվօչերկասսկի ու ամբողջ Ռուսահայաստանի զոհերի դատը։

Ոչքա՞ն թոյն, ատելութիւն և գրգռիչ, ինսինուատորական մոլեգնութիւն... Մեր կուսակցական հակառակորդների փոքրոգութիւնը այնտեղ է հասնում, որ անգամ ի նպաստ բանտարկեալների ձեռնարկուած ժողովարարութեան հանդէպ՝ չեն կարող սառնասիրտ մնալ և ձգտում են վիժեցնել։ Ուրիշները—բուն երկրում—ըստ երևոյթին խիստ ուրախ կառավարական արշաւանքով, սկզբից ի վեր իրենց անխիղճ մամուլի մէջ աշխատեցին լարուած պահել ոստիկանական ուշադրութիւնը դէպի „ատելի մարմինը“ և իրենց կողմից շարունակեցին արշաւանքը այդ մարմնի դէմ նոյն հնա՛նդ մեթոդներով—չարախօսութեամբ, մատնութեամբ, գաղտասուքով... այդ բոլորը վարագուրուած „քննադատութեան“ խիստ թափանցիկ շղարշով։

„Դաշնակցութիւնը“ իր համեստ աշխատանքն ունի Թիւրքիոյ ու Պարսկաստանի վերածնութեան գործի մէջ, մի աշխատանք, որի շնորհիւ նա վայելում է և որոշ դիրք ու պատկառանք այդ երկրներում... որի շնորհիւ (թերևս, գլխաւորապէս) և հալածում է նրան՝ Ստոլիպինի կառավարութիւնը։ Եւ ահա հաճելի էր մեր աչքասեռուած մամուլին—նոյն վայրենի խուճապների ընթացքում — սիստեմատիկ ամբաստանութիւններ ու ինսինուացիաներ ուղղել այդ կազմակերպութեան դէմ, նրա թիւրքական ու պարսկական գործունէութեան հողի վրայ ևս—միշտ „քննադատութեան“ պատրուակի տակ և միշտ սևացնելու, ոչնչացնելու ախորժակով։

Դա նոյն զազիր մամուլն է, որ ազատութեան տարիներում ամեն ջանք ի գործ դրեց՝ ցոյց տալու կառավարութեանը յիշեալ մարմնի դաւադրական քնաւորութիւնը, որ մի օր խօսեց նոյնիսկ, հրապարակօրէն իր էջերում, այդ մարմնի յղացած soi-disant „ազգային կօնսպիրատիվ կառավարութեան“ մասին, մի ուրիշ օր յայտարարեց, որ „Դաշնակցութիւնը“ մտադիր է Էջմիածնի գոյքերն ու գանձարանը բռնագրաւել՝ իր կուսակցական նպատակներին ծառայեցնելու համար։ Դա նոյն մամուլն է, որ երկար ժամանակ թև տուեց, քաջալերեց իր ջերմագին համակրութեամբ այն քստմնելի վոհմակին, որ դարձել էր անարգ գործիք ոստիկանութեան ձեռքերում և որի ցուցմունքներով քննիչ Լիժին

ստեղծագործեց քառասուն հազար էջերից նիւթուած իր „դատը“։ Այդ էջերի մէջ „պատաւոր“ տեղ են բռնում նոյն ժամուլի „քննադատութիւնները“...

Աւելի վայելուչ դիրք չը բռնեց և մեր „դեմոկրատ“ ինտելիգենցիան, իր անգոյն ու արգահատելի ժամուլով։ Քաղաքացիական բաջութեան նշոյլ չը տեսանք—և նրա մէջ։ Ընդհակառակը. ամենատխուր դասալքութիւն, դաւաճանութեան հասնող երկչոտութիւն ու փոքրոգութիւն։ Հէնց որ մի քիչ բարձրացաւ ռէակցիայի ալիքը, այդ պարոնները կծկուեցին և բարձրաձայն „մեղ՛“ գոռացին։ Ամենաթեթև հալածանքի հեռապատկերը և սեփական կաշի ժտահոգութիւնը այնպիսի սոսկում պատճառեց նրանց, որ ուրացան նոյնիսկ նախկին ընկերներին, ոտնահարեցին նրանց դատն ու պատիւը, քարով տուին ամեն սրբութիւն։ Մէկը նոյնիսկ հանդիսաւոր ու սրտաշարժ միամտութեամբ պագնեց իրեն զարնող ձեռքը։ Եւ դրանք ևս հասարակական կարծիքի ղեկավարներ են — մեր „ընտիր“ գրական ու հրապարակախօսական ուժերը—որ թիւրիմացութեամբ կոչուել էին այդ մռայլ շրջանում դաստիարակելու հայ քաղաքացիական միտքը, ուղղութիւն ու ոգի ներշնչելու հայ մտածող երիտասարդութեանը։

Շատ բան չէինք պահանջում և նրանցից... Ոչ թեր, ոչ դէմ—գէթ չէզոք։ Այդ չէզոքութիւնը յարգելու առաքինութիւնն անգամ չունեցան։ Արշաւեցին և նրանք —„նզովելի“ կազմակերպութեան դէմ։ Թունաւոր սլաքներ նետեցին և նրանք՝ cause commune անելով բոլոր վատերի հետ։ Հէնց այդ ժամուլն էր, որ բարձրաձայն յայտարարում էր ի լուր ցարի կառավարութեան, որ հայ ժողովուրդը ոչ մի կապ չունի յեղափոխութեան հետ, որ հայ յեղափոխականի ու ժողովրդի մէջ չը կայ ոչ մի առնչութիւն, որ... ergo, յեղափոխականներին կարող են պատժել (գուցէ և լաւ կ'անեն), դրանից չի յուզւի և չի տառապի հայ ժողովուրդը։ Սրանք խօսքեր ու յայտարարութիւններ են, որ չեն մոռացուի... Սա „փոլիթիկա“ չէ, այլ պրոֆանացիա։ Սա ջայլամի աւանդական քաղաքականութիւնն է, որ ոչ ոքի չի խաբում և որ բնաւ չի դաստիարակում մտքերը, այլ միայն տարածում է անբարոյացումն ու լքում, մի կատարեալ դեմօրալիզացիա...

Ուրիշ բան պէտք էլ չէ մեր „հասարակութեան“ ու նրա ժամուլին։ Մենք միամտութիւն չէինք ունենայ կարծելու, որ այդ ժամուլը ընդունակ է կանգնելու վայրկեանի բարձրութեան վրայ։ Ի՞նչ է նրա իդէալը։ Այն՝ որ տեսնում ենք ամեն օր նրա էջերում իսկ։ Մի գռեհիկ կուսակցապայքար, ուր ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացած է Էջմիածնի, վեղարի ու փարաջայի շուրջը և ուր անվերջ բաղխուում են փոքրիկ-մեծ եսերը իրենց փոքրիկ հաշիւներով։ Սկզբունքի, աշխարհահայեացքի վէճ չը կայ, բոլորն էլ միևնոյն շկոլայի պտուղներ են—լիբերալ, թէ „դեմոկրատ“—բոլորը էապէս գաղափարային մէկ միաձոյլ բանակ է, ուր իշխում է իր մանր կրքերով, իր գորշ մտայնութեամբ և ժանգոտած աշխարհահայեացքով—Տիրացուն։

Վերջինը իր ամբողջ էութեամբ դէմ է „յուզումնալի“ անցքերի, գարշում է յեղափոխութեան ու ազատութեան ժխորներից, նրա իդէալն է՝ խաղաղ, անյոյզ մի մթնոլորտ, ուր կարողանայ հանգիստ որոճալ կեանքի մանր ինտրիգները, և նա տենդային աճապարանքով հրաժարւ՛մք է ասում յեղափոխականներին և հռչակում է ի լուր աշխարհի, թէ հայ ժողովուրդն ևս չունի ոչ մի կապ, ոչ մի առնչութիւն յեղափոխութեան հետ... ուրեմն և... ազատութեան հետ։

*

Ըմբոստեցուցիչ երևոյթներ են — նոյնքան և դառն, ողբալի։ Մեր մէջ աւելի խօսում է վիշտը, քան զայրոյթը։ Ինչպէ՞ս չը վշտանալ և չը նզովել, որ դեռ գտնուում ենք քաղաքացիական ինքնաճանաչութեան այդքան ստոր աստիճանի վրայ...

Սակայն, ցաւելով ու նզովելով հեռու չենք գնայ, ընկերնե՛ր։ Դա մի աւելորդ ապացոյց է՝ որ պիտի խթանէ մեր եռանդն ու ինիցիատիվը։ Դա մի նոր իրողութիւն է, որի հանդէպ պէտք է աւելի զգաստանանք և սեղմենք մեր շարքերը։

Ահա արդէն ռէակցիայի ալիքը գրոհ է տալիս նաև մեր կուլտուրական ավտոնոմիայի երերուն մնացորդների դէմ. ահա նրա, այդ ռէակցիայի, առաջին ծիծեռնակը—չինովնիկ Պետրովը—անում է իր խորհրդաւոր պտոյտները Ռուսական Հայաստանում... ի մեծ զարմանս մեր բուի, ստրկամիտ հասարակութեան և տիրապաշտ ժամուլի, որոնք այնքա՜ն վստահ էին Դաշկովների „բարեացակամ“ ու „հայասէր“ տրամադրութեան վրայ և որոնք երազում էին փրկել ազգը կեղծ ու անկեղծ ներբողներով, գիւրաթեք համակերպութեամբ, կենդանական սերվիլիզմի անօգուտ ու անպատիւ ցոյցերով...

„Գաղտնի խորհրդականը“, ցարի ու Ստոլիպինի հրահանգով մտնում է և հոտոտում ամենուրեք, „ուսումնասիրում է“ եկեղեցու, դպրոցական սիստեմի, թեմական խորհուրդների իրաւասութիւնները, գտնում է նրանց „չափազանց լայն“, անընդունելի, անհաշտելի տիրոջ, համառուսական իրաւակարգի հետ և դրանով իսկ ծանուցանում է գալոց „կարգումների“, հարուածների անհրաժեշտութիւնը.. Այո՛, միմիայն մեր հայկական տխմարամիտ, անբուժելի լաւատեսութիւնը կարող էր „օրօր“ կարդալ կացութեանը, անխախտելի համարել ժողովրդական արիւնով ձեռք բերուած մեր վերջին նուաճումները, ապաւինել Դաշկովներին և հայհոյել ժողովրդի ըմբոստներին, յեղափոխական գործիչներին։

Չենք նախանձում այդ պարոններին, թող շարունակեն իրենց գործը, մենք էլ—մերը։ Իրենցը—մեղկ ու տափակ համակերպում, մերը—բողոք ու կռիւ։

Տեսէ՛ք բարքերի այդ ահաւոր ապականութիւնը, որ ցանել են Լիժինները մեր տարաբախտ երկնքի տակ, վերջին երեք տարիներում։ Անդրկովկասի գիւղ ու քաղաքները լցւել են հայատիպ ու օտարատիպ լրտեսներով, մատնիչներով։ Լրտեսութիւնը սիստեմ է դարձել և շարունակ քարշում է իր ապականող ծոցը՝ հայ գիւղացուն, բանւորին, արհեստաւորին։ Լրտեսութիւն՝ մի քանի ռուբլի, մի քանի կոպէկ շահելու համար... Եւ քանի՜ ընտանիքներ են դժբախտացնում այդ թշւառները իրենց եռանդուն մատնութիւններով. քանի՜սը արդէն դժբախտացել են... Բաւական չեն խոշոր լրտես-չարագործները — հայ և օտար — որոնց շարունակ բաղխւում է „Դաշնակցութիւնը" իր յեղափոխական աշխատանքի մէջ.—այժմ էլ խեղճ ու կրակ, անգիտակից աշխատաւորներն են գահավիժւում այդ զզւելի ախտի անդունդը, մի ախտ, որից Ռուսահայաստանը մինչև օրս ազատ էր մնացել համեմատաբար մաքուր։

Ո՞ւր է մղում այս ընթացքը... Պէտք է հակազդել ամեն գնով, բոլոր միջոցներով։ Կազմակերպութիւնը գնելու է իր նախկին պատւանդանի վրայ, իր ազդու յեղափոխական հմայքի մէջ, որպէս զի կարողանայ ուժգին հակահարւածներով չէզոքացնել թէ դրսի և թէ ներսի դաւերը։ Նրա համար չե՞նք նահատակւել քսան տարի, որպէս զի այսօր, ազատագրւած Թիւրքահայաստանի ու Պարսկահայաստանի սահմաններում, անբարոյացնեն, ապականեն մեր գուրգուրանքի մեծ առարկան—հ ա յ ժ ո ղ ո վ ո ւ ր դ ը։

Ուժե՞ղ լինենք, որ կարողանանք պայքարել այդ տարբալուծող ազդակների դէմ, և թո՛ղ բոլոր ցածերը յաւ գիտակցեն Բուրգաց͡կիների ու Միհրանների ճակատագրական վախճանը։ Որքան մենք աւելի մատնենք խոնարհւելու, համակերպելու տրամադրութիւն, այնքան աւելի կատղելու են ցարիզմի սպասաւորները, այնքան աւելի ուժեղանալու են և կնուտի հարւածները մեր մէջքերին։ Մեր հասարակութիւնը և մամուլը գետնատարած սողում են,—մենք գիտենա՜նք բարձրանալ նրանց խեղդուկ մթնոլորտից և զարկել ահազանգը։ Նրանք ձգտում են բաժանել մեզ ժողովրդից —իսկ մենք ձգտե՜նք միշտ աւելի և աւելի արմատ բռնել այդ ժողովրդի մէջ, որովհետև երբ ցարիզմը կը տեսնէ, որ հայ աշխատաւոր ընդհանրութիւնը յուզւում, ըմբոստանում է իր ըմբոստ զաւակների նահատակութեամբ — բանտերում ու աքսորավայրերում—երբ նա տեսնէ, որ կովկասեան Բաստիլի ետևում կանգնած է կովկասահայ, թիւրքահայ և պարսկահայ ժողովուրդը, նա դիւրութեամբ չի զիջանի արիւնարբու Լիժիններին...

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՆՈՐ ԹԻՒՐՔԻԱՆ

VI

ՕՐԷՆՍԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՒ ՌԷՖԷՐԷՆԴՈՒՄ

—

Անցեալ յօդւածներու մէջ մենք կանգ առանք այն նախնական գործողութիւններու վրայ, որոնք պարլամենտական ռէժիմին հիմունքը կը կազմեն։ Երկրի մը քաղաքական - օրէնսդրական ընդհանուր բնոյթը մեծ չափով կախւած է ընտրողական ձևերէն և սկզբունքներէն։ Առանց այս վերջիններու զարգացման և ռամկավարացման՝ անկարելի է երևակայել ճշգրիտ ու անաղարտ ժողովրդապետութիւն։

Այսպէս. կը հաւաքւի պարլամենտը և կըստանձնէ պետութեան ամենակարևոր պաշտօնը՝ օրէնքներ սահմանելու բարձր գործառնութիւնը։

Քաղաքակրթութեան պատմութեան մէջ Անգլիան առաջինն է, որ յղացած է նոր ժամանակներու այդ նշանաւոր քաղաքական հիմնարկութիւնը—պարլամենտը։ Տակաւին միջին դարերու խաւարին ու համատարած խառնակութեան մէջ՝ ան հանդէս բերաւ ժողովրդական ներկայացուցչութեան նշանակելի գործօնը և իր գոյութեան խարիսխը դարձուց։ Հեռաւոր ու մեկուսացեալ կղզիի վրայ ապաստանած՝ անոր պատմութիւնը չփոթորկւեցաւ եւրոպական ցամաքին արշաւանքներէն։ Ազատ ու ապահով արտաքին ոտնձգութիւններէն ու վտանգներէն, ունկնդիր իր ներքին քաղաքակրթական ձայնին՝ Անգլիան կանգնեց նոր դարերու այն իմաստուն սկզբունքը, որով մեծացաւ ինքը և որ օրինակ հանդիսացաւ մէկէ աւելի ժողովուրդներու։

Պարլամենտական - սահմանադրական կարգը այսօրւան կատարելութեամբ չծնաւ, ի հարկէ։ 1215 թւականի „ա զ ա տ ո ւ թ ե ա ն մ ե ծ հ ր ո վ ա ր տ ա կ ը" թոյլ, տարտամ, չափազանց պակասաւոր գործ էր անշուշտ։ Սակայն իր բոլոր թերութիւններով հանդերձ՝ ան սահման դրաւ թագաւորական բացարձակ ու տարամերժ իրաւունքներուն և սկիզբ դարձաւ քաղաքացիական ազատութեան ու ներկայացուցչական ռէժիմին։

Այնուհետև դարեր շարունակ հին ուժը, նախնական իշխանութիւնը կատաղի ընդդիմադրութիւն ցոյց կուտար նոր իրաւակարգին և կաշխատէր ամեն կերպ խոչընդոտ ըլլալ անոր առաջխաղացման։

Անգլիական պատմութեան կեդրոնական մասը կը կազմէ այն հիմնական հակամարտութիւնը, որ տեղի կունենար թագաւորին և պարլամենտին միջև։ Առաջինը կը ձգտէր՝ հարկադրեալ զիջողութիւններով հանդերձ՝ պահպանել միապետական իշխանութեան ի ր ա կ ա ն անձեռնմխելիութիւնը։ Երկրորդը կաշխատէր թագաւորի պատիւն ու յարգանքը պահելով մէկտեղ՝ երկրի կառավարութեան ղեկը ձեռք առնել։

Պարլամենտին և թագաւորին հակամարտութիւնը անգլիական ազնւականութեան (բարոններու) և միապետութեան ընդհարումն էր։

Այս երկարատև մրցման մէջ յաղթող հանդիսացաւ պարլամենտը։ Անոր միջոցով հաստատւեցաւ այն նշանաւոր սկզբունքը՝ թէ թագաւորութեան գոյութիւնն

իսկ կախուած է պարլամենտի կամքէն և գերիշխանութենէն։

Անգլիական քաղաքական պատմութեան մէջ՝ այս գլխաւոր պայքարէն յետոյ՝ կարևոր տեղ կը բռնէ նաև պարլամենտի ներքին պայքարը—լորդերու և համայնքներու դահլիճներուն ընդհարումը։

Մինչև տասնևվեցերորդ դարը ազնուականութեան և բարձր կղերականութեան ազդեցութիւնը ահագին էր։ Այդ ժամանակէն սկսեալ՝ հասարակական և տնտեսական էւոլիւսիոնը մեծ հարուած հասցուց անոնց կատաղի և սրարշաւ վազքին։ Բուրժուազիան, վաճառական դասը զարգանալով, հարստութեան տիրանալով՝ ուժեղացուց համայնքներու դահլիճին նշանակութիւնը և լորդերու բացարձակ տիրապետութիւնը հետզհետէ նսեմացաւ։

Այս նոր ուժին հանդէպ՝ ազնուականները կորսնցուցին իրենց սկզբնական դերը։ Սահմանադրութեան և պարլամենտին իրաւունքներու պաշտպանութեան մէջ անոնք այլ ևս ցոյց չտուին նախկին նախանձախնդրութիւնը։ Ընդհակառակը, յաճախ միանալով թագաւորին հետ, գաղտնի թէ բացարձակ, դաւադրութիւններ կը յղանային պարլամենտին իրաւունքներուն դէմ։

Համայնքներու դահլիճը, սակայն, ժամանակի ընթացքին մէջ ամրացուց իր ազդեցութիւնը երկրին թէ քաղաքական և թէ մանաւանդ տնտեսական կեանքին վրայ։

Անգլիական սահմանադրութեան մէջ արմատացաւ այն կարևոր սկզբունքը, սովորութիւնը՝ թէ պետութեան դրամական խնդիրը, հարկերու չափը և տեսակը պէտք է տնօրինի համայնքներու դահլիճին ցանկութեամբ և անոր կամքով։

Լորդերու ժողովը և թագաւորը հարկադրուած ընդունեցին այդ խոշոր եղելութիւնը։

Ապա, իրերու ստիպողական բերումով սովորութիւն դարձաւ, որ թագաւորը պարլամենտի մեծամասնութենէն ընտրէ իր նախարարները և պաշտօնէ հեռացնէ զանոնք, ով չեն վայելեր մեծամասնութեան վստահութիւնը։

Այս սովորութիւնը անգլիական քաղաքական կեանքի ամենէն կարևոր բարենորոգումն էր, որ այնուհետև պարլամենտական ռէժիմին հիմքը և գլխաւոր յատկանիշը դարձաւ։ Ասիկա պարլամենտին իրական և անդիմադրելի տիրապետութիւնն էր. ասիկա սահման կը դնէր կառավարական ինքնակամ գործողութիւններուն և գործադիր իշխանութիւնը կ'ենթարկէր օրէնսդիր իշխանութեան։ Երկրին գերագոյն տէրը, վերին կամքը այլ ևս պարլամենտը կը դառնար։ Թագաւորին հին իշխանութիւնները առանց աղմուկի և առանց արիւնահեղ ճակատամարտներու պատմութեան արխիւը կը նետուէին։ Կրստեղծուէր այն բազմաբովանդակ նախադասութիւնը, որ այնքան հեգնաբար և այնքան սրամտօրէն թագաւորող անձնաւորութենէն կառավարելու իրաւունքը կը խլէր.—„թագաւորը կը թագաւորէ, բայց չի կառավարեր“...

—

Անգլիական սահմանադրութիւնը և անոր հիմնական օրէնքները գրուած չեն. ամեն ինչ սովորութեան շուրջը կը դառնայ և անկէ կը սկզբնաւորի։ Փորձի և գործնական իրողութիւններու արդիւնք են սահմանադրական տրամադրութիւնները։

Ֆրանսականին հակառակ՝ փիլիսոփայական գիտութիւններու և հասարակագիտական ընդհանուր ճշմարտութիւններու օգնութեամբ չի կառուցուած անիկա։

Այս պարագան անոր թերութիւնն է և առաւելութիւնը միանգամայն։

Զիջելով սկզբունքային մասերու մէջ՝ անգլիական սահմանադրութիւնը կապահովէ, սակայն ժողովրդին իրական ազատութիւնը։ Ֆրանսականին նման՝ ան վեր չի հաներ մարդկային անբռնաբարելի իրաւունքներուն հարցը ընդհանրապէս ու զայն չի պաշտպաներ ֆրանսացու եղական թափով ու ոգևորութեամբ։ Բայց և այդպէս՝ անգլիական հողին վրայ կը ձգտէ երաշխաւորել անգլիական մարդու քաղաքացիական ազատութիւնը և իրաւական հաւասարութիւնը...

Անգլիական անգիր սահմանադրութեան համաձայն՝ օրէնսդիր իշխանութիւնը կը մարմնանայ երկու ժողովներու մէջ—լորդերու դահլիճ և համայնքներու դահլիճ։ Առաջինը էականապէս պահպանողական հիմնարկութիւն է։ Ան կոչուած է ծառայելու անգլիական մեռնող ազնուականութեան տարամերժ շահերուն ու տիրապետութեան ձգտումներուն։ Ընդհանրապէս թշնամի ռամկավարութեան ու ժողովրդապետութեան՝ լորդերու դահլիճը կը ձգտէ որքան կարելի է պահպանել տխուր անցեալին վատահամբաւ հաստատութիւնները։

Համայնքներու դահլիճը, ընդհակառակը, հետզհետէ նորանալով, բնաշրջելով ու կատարելագործելով՝ կաշխատի դառնալ իսկական ռամկավարական հաստատութիւն։

Այս երկու ժողովներու միջև ընդհարումը ճակատագրական է։ Օրէնսդրական գործողութիւնը անհունապէս կը ջլատի, կ'աղաւաղի. լորդերու ժառանգական հիմնարկութեան քմահաճոյքներէն ու տիրապետութեան վատառողջ ցանկութենէն։

Ազնուական հինաւուրց տներու քանի մը վատասերուած մնացորդներ և անգլիական եկեղեցու քանի մը բարձրաստիճան կղերականներ՝ նստած „վերին“ պալատին մէջ՝ ամեն կերպ կաշխատին խոչընդոտ հանդիսանալ օգտակար ու արդիւնաւոր օրէնսդրութեան։

Իրաւ է, նախարարութիւնը պատասխանատու է համայնքներու դահլիճին առջև. ճիշտ է, կառավարութիւնը, գործադիր իշխանութիւնը կը կազմի այդ դահլիճին մեծամասնութենէն. դրամական հարցերու մէջ, սովորութեան իրաւունքով, ճանչուած է համայնքներու դահլիճին կամքը—այնուամենայնիւ լորդերու պալատին գոյութիւնը և անոր մշտական ոտնձգութիւնները երկրին օրէնսդրական գործունէութեան հանդէպ մեծ արգելքներ կը դնեն։

Ժողովրդական ներկայացուցիչները երկարատև ուսումնասիրութենէ և պատրաստութենէ յետոյ, բուռն ու աղմկալից վիճաբանութիւններու ընդմիջէն ոևէ կարևոր, կենսական օրէնք կը քէարկեն։ Լորդերը քանի մը ժամուան ընթացքին մէջ, առանց մանրամասն հարցն ուսումնասիրելու՝ կը գործադրեն իրենց veto-ին իրաւունքը և կը կանգնեցնեն օրէնքին կիրառումը։

Տեղի կունենայ պարլամենտի ցրումը. նոր ընտրու-

թիւններ, նոր քէէարկութիւն։ Ուրիշ առիթով նոյն երևոյթը կը յառաջանայ և նոյն խաղը կը կրկնուի։

Վերջին տարուան մէջ Անգլիան երկու պարլամենտական կազմ ունեցաւ։ 1910 թուականի յունուար ամսին հաւաքուած համայնքներու դահլիճը չը կրցաւ 1911 թիւը թևակոխել և տեղի տուաւ նոր խորհրդարանին։

Լորդերու պալատը կը խաղայ երկրին իրական ու անհրաժեշտ բարենորոգումներուն հետ և կաւերէ քաղաքական էվոլիւսիոնին բնականոն, առողջ, հետևողական ընթացքը։ Քաղաքական գործունէութիւնը և պատգամաւորներու եռանդը կը զարնուին իշխանական հինաւուրց մնացորդի մը կամայական տրամադրութիւններուն և պետական օրէնսդրութիւնը անյուսալի կերպով կը վիրաւորուի։

Քաղաքական վերածնունդը, սակայն, չի կանգ առներ։ Այսօր լորդերու veto-ի իրաւունքին ջնջումը և մինչև իսկ անոնց ժառանգական պալատին բարձումը անգլիական ռամկավարութեան ամենաառաջնակարգ մտահոգութիւնն է։ Ժողովրդապետական գաղափարը իր զարգացման ճանապարհի վրայ՝ անկարող պիտի ըլլայ հանդուրժել այն տարբերին, որոնք առանց ոչինչ օգտակարութեան՝ կը ծանրաբեռնեն երկրին յառաջադիմութիւնը։

Անգլիայէն զատ՝ քաղաքական-օրէնսդրական հիմնարկութիւնները համեմատական բարձրութեան են հասած նաև Ֆրանսայի, Միացեալ-Նահանգներու և մանաւանդ Զուիցերիոյ մէջ։ Այս պետութիւններէն իւրաքանչիւրը համաձայն իր ազգային հանճարին և իր ուրոյն քաղաքակրթութեան՝ յայտնագործած են ու զարգացուցած քաղաքական բնաշրջման այս կամ այն կողմը և օրինակ հանդիսացած միւս ազգերուն։ Օրէնսդրական իշխանութիւնը այդ երկիրներու մէջ ևս երկու տարբեր ժողովներու իրաւասութեանն է յանձնուած,

Ֆրանսայի ծերակոյտը Անգլիոյ լորդերու պալատին պէս ժառանգական հիմնարկութիւն չէ և ոչ ալ նշանակովի պատգամաւորներէ կը բաղկանայ։ Բայց ադով հանդերձ՝ հիմնուած չ'ըլլալով ընտրողական այն ռամկավարական ձևերու վրայ, ինչ որ խորհրդարանը կը ներկայացնէ ֆրանսական հասարակութեան պահպանողական մասը և լորդերու պալատին նման կաշխատէ արգելք հանդիսանալ արմատական օրէնքներուն։

Ամերիկայի Միացեալ-Նահանգներուն մէջ օրէնսդրական վերին պալատը—ծերակոյտը—շատ աւելի իրաւունքներ ու պաշտօններ ունի։ Խորհրդարանին քէէարկած օրէնքներու հաստատութենէն կամ մերժումէն զատ՝ ան կը մասնակցէ նաև գործադիր իշխանութեան։ Հանրապետութեան նախագահին և անոր նախարարներուն գործունէութիւնը ծերակոյտին հսկողութեան կ'ենթարկուի։ Կարելի է ըսել, որ Ամերիկայի մէջ կառավարութիւնը այդ երկու մարմիններու—նախագահին և ծերակոյտին — փոխադարձ համաձայնութեան արդիւնքն է։ Նախարարները պաշտօնի կը կոչուին նախագահին կողմէ ծերակոյտին հաւանութեամբ։ Անոնց պատասխանատուութիւնը ոչ թէ պարլամենտին, այլ միայն այդ մարմիններուն առջև է։ Խորհրդարանը, ժողովրդական առաջին օրէնսդրական հաստատութիւնը, օրէնքներու գործադրութեան վրայ անմիջական հսկողութիւն չունի։

„Գերագոյն Ատեանը", *Cour Supreme* — որի վրայ մենք ուրիշ առիթով ևս կանգ կառնենք — օրէնսդրական բարձր մարմնի մը իրաւունքները կը վայելէ։ Այդ հաստատութեան անդամները ընտրովի չեն, այլ նշանակովի. պաշտօնի կը կոչուին — ծերակոյտին հաւանութեամբ — հանրապետութեան նախագահին կողմէ և չնայելով այս հանգամանքին՝ անփոփոխելի են։ Գերագոյն Ատեանը veto-ի իրաւունք ունի նախագահին գործողութիւններուն և պարլամենտի բոլոր այն որոշումներուն վրայ, որոնք իրեն հակասահմանադրական կ'երևան։

Այսպէս. Միացեալ-Նահանգներուն մէջ օրէնսդրական հաստատութեան ազատութիւնը ենթարկուած է նախագահին, ծերակոյտի և Գերագոյն Ատեանի սահմանափակումներուն։

Ինքնըստինքեան ակներև է, որ կառավարական այս ձևը չի բղխիր ժողովրդին մեծամասնութեան պահանջներէն ու չի համապատասխաներ ռամկավարութեան սկզբունքներուն։

Սահմանելով ընդհանուր ձայնտուութեան յառաջադէմ օրէնքը, ընդունելով լայն խաւերու մասնակցութեան անհրաժեշտութիւնը օրէնսդրական հաստատութեան մէջ՝ պետութիւնները ամեն ճիգ թափած են, սակայն, զսպելու համար ժողովրդական իսկական գերիշխանութիւնը։

Թէ Անգլիա, թէ Ֆրանսա և թէ Միացեալ-Նահանգները տակաւին չեն կրցած իրագործել ռամկավարօրէնսդրութեան իսկական և անաչառ սկզբունքը։ Զգալով և գիտակցելով հանդերձ, որ պարլամենտները—որպէս մարդկային հաւաքոյթներ—միշտ սխալական են՝ անոնք, պետութիւնները, չեն կամեցած պարլամենտին սխալներն ու վրիպումները սրբագրել ժողովրդական քէէարկութեամբ։

Օրէնսդիր իշխանութեան, պարլամենտին իրաւունքները ամենէն աւելի յարգուած են Զուիցերիոյ մէջ։ Այստեղ ալ երկու օրէնսդրական հաստատութիւններ գոյութիւն ունին՝ ազգային խորհուրդ (conseil national) և պետութիւններու խորհուրդ (conseil des Etats)։ Սակայն երկրորդ հաստատութիւնը չունի այն իրաւունքներն ու վճռական դիրքը՝ օրէնսդրական-պետական լուրջ խնդիրներու նկատմամբ՝ ինչ որ ունին Անգլիոյ լորդերու պալատը, Ֆրանսիայի ծերակոյտը և Միացեալ-Նահանգներու գերագոյն ատեան-ծերակոյտ-նախագահը։

Զուիցերիան այդ տեսակէտով—ինչպէս և ուրիշ շատ հարցերու նկատմամբ—կրցած է աւելի առաջ երթալ և զարգացնել, մշակել իսկական ժողովրդական օրէնսդրութիւն։

Ժամանակակից կառավարութիւնը օրէնսդրական երկու պալատի սկզբունքը չէ ընդուներ, քանի որ վերին պալատը, ծերակոյտը, լորդերու ժողովը էականապէս պահպանողական-յետադիմական հաստատութիւններ են և չեն նպաստեր երկրին բնական, խաղաղ, առողջ զարգացման։ Անոնք միապետութեան և բռնակալութեան տխուր մնացորդներն են, որ միայն պատնէշ կը կանգնեն արմատական ու կենսական բարենորոգումներու հանդէպ, որ կը ձգտին ամեն կերպ պաշտպանել մեռնող դասակարգերուն շահերն և օգուտները և յարատև դարձնել փոքրամասնութեան տարամերժ տիրապետութիւնը...

Պարլամենտները թերութիւններ ունին, անկասկած։

Որքան ալ ընտրողական սիստեմները լայն, յառաջադէմ, ռամկավար սկզբունքներու վրայ հիմնուած ըլլան՝ այնուամենայնիւ անոնք չեն կրնար ժողովրդական իսկական և անայլայլ կամքը ներկայացնել։ Միշտ առաւել կամ նուազ խոտորում, շեղում գոյութիւն կունենայ պառլամենտի և ժողովրդի միջև։ Անոնց կատարեալ ու բացարձակ զուգադիպութիւնը անհնարին է։ Ռամկավարութիւնը շատ լաւ կը հասկնայ այս ճշմարտութիւնը։ Կը հասկնայ և կ'աշխատէ ամեն կերպ — թէ բարոյական և թէ իրաւական ճանապարհներով — սրբագրել պառլամենտական սիստեմին սխալները։

Բարոյական գործօններուն մէջ յիշատակութեան արժանի է հասարակական կարծիքին ուժը, որ ահագին դեր կը կատարէ հասարակական զարգացման տեսակէտով և բնաւ արհամարհելի քանակութիւն չէ։

Նոր ժամանակներու այդ կարեւոր արտայայտութիւնը — որքան ալ զուրկ իրաւական հանգամանքէ — այնուամենայնիւ մեծ ազդեցութիւն ունի մարդկանց և պետական մարմիններու գործունէութեան վրայ։

Երբ հասարակական կարծիքը միաձայն ու միահամուռ, գրքերու ու լրագիրներու միջոցով, հաւաքաբար թէ անհատաբար, հրապարակական մեծաքանակ ժողովներէ, թէ հեռաւոր, խուլ անկիւններէ, պաշտօնական հիմնարկութիւններէն, թէ մասնաւոր տներու ներսէն՝ կը հրահանգէ, կը պահանջէ, կը հարկադրէ ոևէ խնդրի այս կամ այն լուծումը — իրաւական մարմինները, իբրև մէկ անբաժանելի մասն այդ ամբողջութեան ու մէկ հատուածը ընդհանուր կեանքին՝ չեն կրնար դիմադրել տիրող հրամայական տրամադրութիւններուն։ Ու ճակատագրականապէ՝ օրէնսդիր հիմնարկութիւններու որոշումները առաւել կամ նուազ ենթակայ են հասարակական կարծիքին ազդեցութեան...

—

Հասարակական կարծիքէն զատ — որ իրաւական ոչ մէկ հանգամանք չունի և որ յաճախ կրնայ հանդէս գալ աղաւաղուած արտայայտութեամբ — օրէնսդիր իշխանութիւններու սխալները սրբագրելու համար կայ և աւելի նպատակայարմար ձև։

Վիճելի հարցերու մէջ, բարդ, կնճռոտ, պատասխանատու որոշումներու ժամանակ՝ փոխանակ ենթակայ ըլլալու ծերակոյտի, թագաւորի և այլ պահպանողական մարմիններու քմահաճոյքին՝ ազգային ներկայացուցչական ժողովը կրնայ դիմել նոյն ինքն ժողովրդին և հարցնել անոր կամքը։ Որոշ թիւ քաղաքացիներու պահանջին համաձայն՝ խորհրդարանին մէջ քուէարկուած օրէնքը կանգ կառնէ, անոր գործադրութիւնը ժամանակաւորապէս կը յետաձգուի՝ մինչև որ երկիրը ընդհանուր ձայնատուութեամբ իր այս կամ այն տրամադրութիւնը ի յայտ բերէ։

Այդպիսով ժողովուրդը կը հանդիսանայ, որպէս մէկ հաւաքական թագաւոր, կամ ծերակոյտ, կամ գերագոյն ատեան, որ պառլամենտի որոշման հանդէպ կը դնէ իր վետօն, կը յայտարարէ իր արգելքը և կամ ընդհակառակը՝ կուտայ իր համաձայնութիւնը։ Օրէնսդրական վրիպումները կանոնաւորելու համար ժողովրդի այս ուղղակի և անմիջական մասնակցութիւնը ամենաարդար և ամենառամկավար սկզբունքն է։ Զուիցերական փոքրիկ հանրապետութեան մէջ այս ձևը գոյութիւն ունի և յայտնի է ռէֆէրէնդում անունով։ Անոր խաղացած դերը և հասարակական-քաղաքական նշանակութիւնը մինչև օրս ահագին է եղած հելվէդեան պատմութեան մէջ։ Չը կայ ոչ մէկ զուիցերացի — կղերական, պահպանողական, ազատական, արմատական, ընկերվարական — որ հակառակ ըլլայ օրէնսդրական այդ սրբագրիչ հաստատութեան, որ կամենայ օրէնքներու վաւերացման կամ մերժման վերին արտօնութիւնը խլել ժողովրդէն և յանձնել ոևէ այլ մարմնի։ Զուիցերացին ուրիշ կերպ չի ըմբռներ իր սահմանադրութիւնը, իր օրէնսդրական հիմնարկութիւններու ոգին։ Ամենուն գերագոյն տէրը, սկիզբն ու վախճանը ժողովուրդն է։

Ռէֆէրէնդումի միջոցով օրէնսդրական հարցերը աւելի պարզ ու աւելի անջատ հրապարակ կուգան։ Հասարակութիւնը, ընտրող ազգաբնակութիւնը հոս ազատ է այն բարդութենէն ու այն բազմաթիւ դժուարութիւններէն, որոնց ենթակայ է առհասարակ ընդհանուր ընտրութիւններու ատեն։

Վերջին պարագային՝ ազգաբնակութիւնը կանգնած է խճճուած ու կնճռոտ խնդիրներու հանդէպ. գործ ունի պետական-օրէնսդրական ամեն կարգի, ամեն մասնագիտութեան և ամեն արժէքի մտահոգութիւններու հետ. հարկադրուած է՝ առարկայական հարցերէն զատ՝ մեծ չափերով ի նկատ առնել, քննադատութեան ենթարկել և պատգամաւորական թեկնածուները, որ ամենևին դիւրին բան չէ։ Այս բոլորը մէկէն ծանրացած են ընտրող անհատին վրայ, որ պէտք է համախմբէ, դասաւորէ, կարգի բերէ ամենը և ըստ այնմ իր եզրակացութիւնը յայտնէ քուէի միջոցով։

Քաղաքացին, մանաւանդ սովորական քաղաքացին չի կրնար բարեխղճութեամբ այս դժուարին պարտականութեան տակէն ելնել։ Զիջողութիւնները անհրաժեշտ կը դառնան։ Չարիքի փոքրագոյնը ընտրելու հարկին մէջ կը գտնուին։ Պատգամաւորը, խորհրդարան գացող և օրէնքներ սահմանող քաղաքացին չի կրնար բոլոր խնդիրներու մէջ համամիտ ու միաբան ըլլալ իր ընտրողներու հետ։ Այդպիսի ճշգրիտ ու կանոնաւոր համաձայնութիւն անկարելիութեան կը զարնուի։

Մինչդեռ ռէֆէրէնդումի ժամանակ՝ ընտրող քաղաքացիները գործ չունին այլ ևս վերոյիշեալ դժուարութիւններու հետ։ Հարցը այստեղ որոշ է։ Մէկ հատիկ խնդիր է յանձնուած անոնց քուէարկութեան։ — Պէ՞տք է արդեօք արգիլել թունաւոր ըմպելիներու վաճառումը, թէ՞ հարկաւոր է թոյլատրել։ Ընդունե՞լ արդեօք համեմատական ներկայացուցչութիւնը իբրև հիմք Դաշնակցութեան՝ թէ՞ մերժել...

Ժողովուրդը այսպիսի պարզ, մէկին, անջատ հարցերու նկատմամբ շատ աւելի ճիշտ կրնայ արտայայտուիլ ու շատ աւելի դիւրութեամբ իր պարտականութիւնը ի կատար ածել։

Վիճակագրական տեղեկութիւններով ապացուցուած է, — և պարզ տրամաբանութիւնն ալ կը հաստատէ — որ ընդհանուր ընտրութիւններու ատեն ազգաբնակութեան մէկ խոշոր մասը անտարբեր կը գտնուի և չի մասնակցիր քաղաքական պայքարին։ Այս երևոյթը ուրիշ պատճառներէ զատ՝ կարելի է բացատրել նաև անով, որ

հասարակութիւնը կը ձանձրանայ, կը յոգնի բարդ ու խճճւած խնդիրներէ։

Որքան պարզութենէ ու որոշութենէ զուրկ ըլլայ քաղաքական պայքարին պարունակութիւնը, որքան կընճռոտ անոր բնոյթը — այնքան աւելի մասնակցողներու թիւը սահմանափակ շրջանի մէջ կը մնայ։

Մինչդեռ ռեֆերենդումի ժամանակ՝ վիճելի խնդրին պարզութեան հետեւանքով՝ կենդանի և օգտակար հետաքրքրութիւն կ՚արթննայ քաղաքացիներու կողմէ։

Քաղաքական-հասարակական այս ուշագրիւ վերաբերմունքն ու զգայնութիւնը ահագին նշանակութիւն ունին օրէնսդրութեան ռամկավարացման համար։ Ժողովուրդը գործնականապէս և պայքարի ժամանակ իրազեկ կը դառնայ պետութեան այս կամ այն օրէնքին։ Եւ այնուհետեւ շատ լաւ կիմանայ, թէ ո՛ր օրէնքը անցաւ և ո՛րը մերժւեցաւ։ Իւրաքանչիւր օրէնսգիրք իբրև հիմնական սկզբունք կը յայտարարէ թէ՝ „ոչ ոք ազատ է անգիտանալ օրէնքը“ — *nul n'est censé ignorer la loi* — բայց իրականի մէջ, նոյն իսկ ամենալուսաւոր ու քաղաքակիրթ երկիրներու ժողովուրդները չափազանց հեռու են օրէնքի ծանօթութենէն։ Ռեֆերենդումի ժամանակ ազգաբնակութիւնը անմիջական շփում կունենայ օրէնքներու առարկային հետ և կը թափանցէ անոնց ոգին... Օրէնսդրական այս ռամկավար հաստատութիւնը ազատ ու լայն ընթացք կուտայ ժողովրդի քաղաքական դաստիարակութեան։

Ընդհանուր ընտրութիւնները սովորաբար երկար ընդմիջումներով տեղի կունենան։ Քաղաքացիները 4—5 տարին մէկ անգամ կը շարժւին, կը յուզւին, կը փոթորկւին, այնուհետեւ ամեն ինչ կը հանդարտի և ազգաբնակութիւնը այլ ևս չի հետաքրքրւիր, չի ապրիր պետական-խորհրդարանական ներգործօն կեանքով։

Այս վայրկենական բռնկումը և տարիներու այս երկար ընդհատումը բնաւ նպաստաւոր պայմաններ չեն ներկայացներ ժողովուրդներու հասարակական զարգացման համար։

Ռեֆերենդումը աւելի առողջ և աւելի բնական մթնոլորտը կըստեղծէ։

Ընդհանուր ընտրութիւններու ժամանակ այն հասարակութիւնները, որոնք զուրկ չեն վերոյիշեալ հաստատութենէն — օրինակ զւիցերացիք — պէտք չունին ուժերու վատառողջ լարումին և քաղաքական պայքարի չափազանցեալ ուժգնութեան։ Անոնք շատ լաւ գիտեն, որ պարլամենտը ամենակարող չէ և որ ընտրութիւններու վախճանով ամեն ինչ չը վերջացաւ։ Գիտեն, որ բարդ, վճռական ու էական խնդիրները պէտք է յանձնւին ժողովրդական քւէարկութեան։ Այդ պատճառով նախ՝ ընտրական պայքարը չափաւորութեան ու բնականութեան սահմաններէն չի անցնիր և ապա քաղաքացիները չեն զրկւիր քաղաքական կեանքին մասնակցելէ պարլամենտական նստաշրջաններու գործունէութեան միջոցին։

Ռեֆերենդումի հակառակորդներու կարծիքով այդ հաստատութիւնը — ինչպէս և համեմատական ներկայացուցչութիւնը — կը վնասէ խորհրդարանական մեծամասնութեան և կը խախտէ կառավարութեան վարկն ու դիրքը։ Պարլամենտը իր իրական և բարոյական ազդեցութիւնը կը՝ կորսնցնէ։ Պատգամաւորները այլ ևս եռանդով և բարեխղճութեամբ չեն գործեր։ Հարցերու ուսումնասիրութիւնը իբր թէ ցանկալի խորութեամբ չեն կատարւիր։

Բոլոր այս ենթադրութիւնները մտացածին են և բնաւ չեն համապատասխաներ իրականութեան։

(Կը շարունակւի)

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ս.-Ր.-ՆԵՐԸ ԵՒ ԶԻՆՒԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ *)

Նոյն դառն, ցաւեցնող խոստովանութիւնները...

Այդպէս ենք տեսնում ս.-ր.-ների թէօրիական հանդէսի մէջ զետեղւած հետազօտութեան մէջ, նւիրւած „ընդհանուր ապստամբութեան“ խնդրին։

Ռուս յեղափոխականները — սոցիալիստներ ու սոցիալ-դեմօկրատներ — ընդունում են, որ դա առաջնակարգ, կենտրոնական խնդիրն է, որ առանց այդ ընդհանուր սպառազէն ըմբոստացման՝ Ռուսաստանը չի կարող ազատւել։

Եւ սակայն, ինչպէ՞ս է տնօրինւել այդ մեծագոյն խնդիրը նոյն այդ յեղափոխական կուսակցութիւնների կողմից...

Ծայրայեղօրէն վատ, անշնորհք, մակերեսային ու թեթեւամիտ ձեւով — այսպէս է հռչակում սոց.-յեղափոխականների վերոյիշեալ թէօրիական հանդէսը „Զինւորական ըմբոստացումների անաջողութեան հարցի առթիւ“ խորագրով իր տեսութեան մէջ։

Այդ անկեղծութիւնը պատիւ է բերում օրգանին ու կուսակցութեան, բայց մենք չենք մխիթարւում դրանով։ Մենք համակւում ենք անսահման դառնութեամբ — աւելին կասենք — ցասումով հանդէպ այն պաղ, թեթեւամիտ ու յանցաւոր անտարբերութեան, որով վերաբերւել են Ռուսաստանի բախտը տնօրինող կուսակցութիւնները՝ այդ չարքաշանջ և հրատապ կնճռին։

Թողնենք, որ խօսէ ինքը պերճախօս հանդէսը.

„Մենք, խօսքի յեղափոխականներս, գաղափարի յեղափոխականներս, մենք միանգամայն զուրկ ենք մարտական-զինւորական յատուկ պատրաստութիւնից **)։ (Мы—революціонеры идеи, революціонеры слова, мы лишены всякой спеціальной военно-боевой подготовки)։

...„Կարելի է ասել անտարակուսելի վստահութեամբ, որ գլխաւոր սխալը կայանում է նրանում՝ որ յեղափոխականների ահագին մեծամասնութեան մէջ կատարելապէս բացակայում է պարզ հասկացողութիւնը այն մասին, թէ ինչ է զինւած ապստամբութիւնը և ինչ ձեւերով կարող է նա իրականանալ։ Այդ պատճառով և մենք տեսնում ենք տարերային բունտեր — ընդվզումներ — տեսնում ենք կազմակերպւած ապստամբութեան փորձեր, որոնք խայտառակօրէն ձախորդ են և որոնց յանցաւորութեան գիտակցութիւնը անողոք ցաւ է պատճառում“։ (...Попытки организованнаго возстанія, неудачныя до

*) Տես «Դրօշակ», № 1:

**) Ստորագծողը ամէն տեղ մենք ենք:

позора, до жестокой боли сознанія преступности подобныхъ попытокъ *)։

Զը կար որևէ ծրագիր ընդհանուր ապստամբութեան, չը կար բնաւ կարգապահութիւն, և որ գլխաւորն է, չը կար ինքը ապստամբական բանակը։

Ո՞ւրեղից գար... Չէին պատրաստել։ Ոչ ոք չէր հոգացել։ Աւելի „հրատապ“ ու հրապուրիչ հոգսերը կային... Թէորիական բանակռիւները սոցիալիզմի ու դոգմերի շուրջը...

Այդպէս—սոցիալ-դեմոկրատները։

Այդպէս—նոյնիսկ սոցիալիստ-յեղափոխականները։

Սպառազէն ժողովուրդն էր, որ գրոհ տուեց Լուդովիկոս XVI-ի գահի դէմ և բուռն ու կարճատև ճակատամարտով առաւ Բաստիլը։ Սպառազէն ժողովուրդն էր, որ այնուհետև պարբերաբար ներս էր խուժում Ազգային Պատգամաւորական Ժողովների նիստերի մէջ և թելադրում չափաւոր ոչ պատեհապաշտ ժիրոնդիստներին՝ լինել արի և համարձակ, լինել ըմբոստ ու վճռական։ Նոյն սպառազէն ժողովուրդն էր, որ դրեց իր հուժկու դրոշմը Մեծ Յեղափոխութեան մրրկայոյզ դրւագների, նրա յօրինած ռէֆորմների ճակատին։

Խօսե՞լ արդեօք նորագոյն ժամանակների մասին։ Յիշե՞լ արդեօք ժողովրդային սպառազէն ըմբոստացումները, զինավարժ կամաւորների լեգէոնները, նոյն Ֆրանսիայում, ապա և միւս, հարևան ու հեռաւոր երկրներում... զինուած ըմբոստացումներ, որ գրեթէ միշտ քարշում էին իրենց ծոցը՝ բանակի մի մասը, նրա գիտակից հատուածը։

Այդ գիտակից տարրերը թւով չափազանց աննշան են Ռուսաստանի հսկայական բանակի մէջ... Եւ դա մի աւելորդ պատճառ էր, որ պիտի դրդեր յեղափոխականներին՝ կազմակերպել իրենց յատուկ ժողովրդական բանակը, իրենց յատուկ մարտական լեգէոնները։

Չ'արին։ Փորձ անգամ չ'արին։ „Փորձերը ձախորդ են—մինչև անարգանք“...

Չափազանց, այո՛, պերճախօս են երկու անգան խոստովանութիւնները։ Մէկը ռուսական Սոցիալ-դեմոկրատիայի Տեղեկագիրը Կոպենհագի Ինտերնացիոնալին։ Միւսը՝ այս ուշագրաւ տեսութիւնը ս.-դ.-ների հանդէսի մէջ։ Առաջինը ամբողջ ս.-դ. կուսակցութեան porte-parole-ն է, երկրորդը՝ ս.-դ.-ական կուսակցութեան մի նշանաւոր և ձեռնհաս անդամի։ Առաջինը ասում է, որ կուսակցութեան առաջապահիկ մարտիկները Յեղափոխութեան փոթորկի միջոցին էր, որ պիտի սորվէին զէնք գործածելու տարրական արհեստը.. Երկրորդը ասում է, որ այդ սորվածն էլ մի բան չ'եղաւ, և ապստամբութեան բոլոր փորձերը վիժեցին—պէտք է վիժէին—արգահատելիօրէն, ամօթալիօրէն։ Ռուսները եղան խօսքի, գաղափարի յեղափոխականներ—ոչ զէնքի ու վառոդի... Այդպէս է յայտարարում ս.-դ.-ական թէօրետիկոսը։ Եւ ճիշտ է ասում։

Երբ գրում էինք „Դրօշակի“ յօդուածները, նուիրուած ժամանակակից յեղափոխական Ռուսաստանի այդ մեծ վէրքին, երբ „Դաշնակցութիւնը“ ուղղում էր Ինտերնացիոնալին իր յատուկ Տեղեկագիրը, ուր ակնարկւում էր ռուս մարքսիստների ու սոցիալիստների գործելակերպի այդ թոյլ, վիրաւոր կողմի վրայ, երբ „Դաշնակցութեան“ պատգամաւորները նոյն Կոպենհագի յատուկ խորհրդաժողովում ռուս յեղափոխականների առջև շեշտում էին նոյն աղաղակող տարկանոնութիւնը, նոյն կրաւորական ապօլիտիզմը և մարտական ուժի ու պատրաստութիւնների ծայրայեղ տկարութիւնը—այն ժամանակ դեռ չը կային հրապարակի վրայ—գէթ ինքներս դեռ չէինք լսել — ս.-դ.-ների ու ս.-ր.-ների այս ուշագրաւ խոստովանութիւնները։ Այսօր մենք տեսնում ենք, որ պատկերը աւելի ևս ողբալի է, քան մենք էինք երևակայում։ Դիմենք դարձեալ ս.-ր.-ական Հանդէսին։

„Կեցցէ՛ ընդհանուր ապստամբութիւնը“ — միլիոնաւոր արձագանքներով հնչում էր այդ կոչը 1905-ի անմոռանալի թւականին, Ռուսաստանի մի ծայրից միւսը։ Յեղափոխական ամեն մի թռուցիկ, միտինգային ամեն ճառ վերջանում էր այդ խրոխտ մարտահրաւէրով...

Եւ հասկանալի էր։ Յեղափոխականները տեսնում էին, թէ ինչպէս բաշիբոզուկ կառավարութիւնը հրացանազարկ էր անում անզէն գիւղացիներ, բանւորներ, ինտելիգենտներ... Սուինների դէմ միակ զէնքը—սուիններն էին, հրացանը, ատրճանակը... Արմատականներ ու չափաւորներ, սոցիալիստ-յեղափոխականներ և սոցիալ-դեմոկրատներ, մասամբ նոյնիսկ կադէտներ — կամայակամայ որոճում էին ընդհանուր ապստամբութեան գաղափարը, իբրև միակ դարմանը ողբերգական և անպատիւ վիճակին։

Ո՞ւր էր սակայն զօրքը...

Սեփական զօրք չունէր Յեղափոխութիւնը։ Պէտք էր, ուրեմն, դնել յոյսերը կառավարական բանակի վրայ։ Վերջինի մէջ կային, ճիշտ է, խմորումներ։ Թոյլ, աննշան—համեմատաբար—բայց դարձեալ արժէքաւոր։ Շատ թէ քիչ վարժ, փորձառու յեղափոխական կազմակերպութիւնը կարող էր ստեղծել նոյնիսկ այդ թոյլ—բայց համատարած—խմորումներից՝ հսկայական պայթուցիկ նիւթ, և ուղղել այն բռնակալութեան դէմ։

Յիսունի չափ նահանգներում ծագել էին „զինուորական յուզումներ“, տեղ-տեղ լուրջ, ահաւոր, սպառնական։ Բայց և ոչ մէկը նրանցից չը վերածուեց ապստամբութեան, բոլորն էլ վիժեցին։

Մեծ թւով զինուորներ, իրենց ջերմ համակրութիւններով Յեղափոխութեան կողմն էին, շատ տեղերում կատարուեցին դասալքութիւններ ու ըմբոստացումներ—այս կամ այն առիթով. յեղափոխականները աջողեցին շատ տեղերում տարրալուծել բանակը, մտցնել ըմբոստացման հեղեղը զօրանոցների մէջ... Բայց և ոչ մի տեղ չը կարողացան կազմակերպել այդ ցիրուցան բռնկումները, չը կարողացան ձուլել ապստամբական բանակ և ուղղել յարձակողական հոսանքը դէպի թշնամու միջնաբերդերը։

„Մի բան անվիճելի է—ասում է ս.-դ.-ական յօդուածագիրը—այն՝ որ անոջողութեան պատճառների մի մասը գտնւում էր մեր մէջ...

„Մեզ մօտ չը գտնուեցան մարդիկ, որ կարողանային

*) «Սոցիալիստ-Ռէվոլիւցիոնէր», 1910 թ. № 2։

իրենց ձեռքն առնել ժողովրդական բանակի կազմակերպումը, այն ժամանակ, երբ իշխանութիւնը գլուխը կորցրել էր“...

„Դիրքերը գրաւելով, ժողովուրդը անկարող եղաւ պահպանել նրանց... Չը կար ժողովրդական կազմակերպւած բանակ... Այդ մասին յաճախ բոլորովին չէին էլ մտածում (յեղափոխականները)։ Բնաւ միտք անգամ չէր ծագում, որ ժողովրդական յեղափոխութեան համար պէտք է սեփական բանակ ունենալ։ Յոյս ունէին, թէ ինքը բանակը (կառավարական) կազմ ու պատրաստ կ'անցնէր մեր ձեռքը“։

Ոչ մի ռազմական, յարձակողական նախագիծ։ Ամեն տեղ—Պետերբուրգ, Մոսկւա, Կովկաս, Ռոստով, Թուրքեստան, Սիբիր—ամեն տեղ յեղափոխականները իրենց առանձին նախագիծն ունէին—և՝ ոչ մի կապ այդ բոլորի միջև։ Ասես բոլոր այդ բռնկումները կատարւում էին տարբեր երկրներում։

Առաջին մեծ ըմբոստացումը „Կնեազ Պոտեօմկին“ զրահանաւի թռիչքն էր Սև ծովի վրայ—մի թռիչք՝ որ կատարեալ անակնկալ էր թէ կառավարութեան և թէ յեղափոխականների համար։ Խմորումը վայրկենաբար սաստկացաւ զօրքերի մէջ, ստեղծւեց վերին աստիճանի նպաստաւոր հող՝ յեղափոխական զինւորութիւնը կազմակերպելու համար, բայց...

Բայց յեղափոխական կազմակերպութիւնները չը կարողացան շահագործել այդ նպաստաւոր վայրկեանը, և երբ պայթեց ընդհանուր Գործադուլը, դեռ չը կար զինւորական կազմակերպութիւն, չը կային գէթ մի քանի ուժեղ կորիզներ, որ կարողանային նեցուկ լինել գործաթող աշխատաւորութեան պահանջներին։

Ապա գրեթէ միաժամանակ պայթեցին զինւորական երկու ընդվզումներ (Հոկտեմբեր 26, 1905 թ.). Կրօնշտատ և Վլադիվօստօկ. երկուսի մէջ միանգամայն բացակայում էր կազմակերպական ոգին և թագաւորում էր քաօսն ու կոյր, վայրագ կիրքը։ (Оба бунта совершенно схожіе по безпорядочности, слѣпому разгулу страстей и полному отсуствію малѣйшей организованности)։

Գիտակից տարրը չնչին թիւ էր կազմում. շարժումը խուլիգանական, պօգրօմային կերպարանք առաւ. կառավարութեան դէմ արշաւելու տեղ՝ սկսեցին քանդել, թալանել և հրդեհել տներն ու խանութները... Եւ այդ բունտերը, բնականաբար, ի վերջոյ նպաստեցին կառավարութեան ծրագիրներին։

Ապա բարձրացան զինւորները Սեվաստոպոլում, Կիեւում, Տաշկենտում։ Դարձեալ նոյն քաօսը։ Ոչ մի ղեկավարութիւն։

Ահա, վերջապէս, և ամենալուրջ փորձերը. Սվէաբորգ, Կրօնշտատ (երկրորդ անգամ) և Ռեվել։ Այդտեղ կար որոշ ծրագիր և շատ թէ քիչ լուրջ նախապատրաստութիւն։ Բալտեան ծովի բերդերը գրաւելով, յեղափոխականները կամեցան կղզիացնել Պետերբուրգը և տիրել նրան։ Ի՞նչ եղաւ, սակայն։ Ս.-ր.-ական յօդւածագիրը պատմում է մեզ.

Ցրւեց առաջին Դուման։ Տրամադրութիւնները վառւեցին, բարձրացան։ Տրւեց ապստամբութեան ազդանշանը։ Ապստամբութիւնը բռնկւեց։ Բայց որքա՜ն կարճատև։ Յունիսի 19—20-ի (1906 թ.) գիշերը Կրօնշտատի նաւաստիներն ու զինւորները բարձրացան, բայց հէնց նոյն գիշերն էլ ապստամբութիւնը խեղդւեց։ Խեղդողը... մի գունդ էր, որի վրայ յեղափոխականները մեծ յոյսեր էին դրել—Ենիսէյան գունդը։

Սվէաբորգում քիչ աւելի երկար տևեց ըմբոստացումը։ Բայց հէնց որ նրա ղեկավար մի օֆիցեր—Եմելիանով—սպանւեց և մի ուրիշը ձերբակալւեց... անմիջապէս սկսւեց շփոթ, իրարանցում և կառավարութիւնը այդտեղ ևս առանց դժւարութեան հանգցրեց հրդեհը։ Այդպէս էր կազմակերպւած ամենալուրջ զինւորական ապստամբութիւնը։

Ռեվելում—նոյն վախճանը։ Այնտեղ էլ ապստամբական բանակի մի մասը յայտնւեցին սև-հարիւրակեան խուլիգաններ և նրանք իրենք ջարդեցին ապստամբներին...

Մեծ-մեծ ծրագիրներ—բայց կառուցւած աւազի վրայ.. Եւ նրանք խորտակւեցին բռնակալութեան թեթև գրոհից։

Լինէ՜ն այդ ապստամբութիւնների մէջ մի տասնեակ յանդուգն ու վճռական ղեկավարներ—ամենայն հաւանականութեամբ անցքերը այլ վախճան կունենային։

Ամենակրիտիկ վայրկեաններում՝ ղեկավարները ցոյց տւին գործնական ոգու և մանաւանդ վճռականութեան կատարեալ բացակայութիւն։ Կրօնշտատում յեղափոխական նաւաստիները, փոխանակ կրակ տեղալու Ենիսէյան գնդի վրայ—որ բռնել էր դաւաճանօրէն թշնամական դիրք—դիմում են նրանց, խուլիգաններին, ընկերական յորդորով և ճչում են.

„Ընկերնե՜ր, եկէք միացէք մեզ, կռւե՜նք միասին ազատութեան համար“...

Դրան ի պատասխան՝ Ենիսէյան գունդը թափում է գնդակների կարկուտը և անպատիւ փախուստի մատնում յեղափոխական բանակը։

Հապա տեսէք, թէ ինչ եղաւ Սվէաբորգում։ Ապստամբութիւնը աջող եղաւ համեմատաբար, բոլոր ամրութիւնները անցան յեղափոխականների ձեռքը։ Մնում էր կենտրոնական բերդը, բայց նա էլ չունէր դիմադրելու միջոց, մնացել էր կղզիացած։ Յեղափոխականները այնքան ուժեղ էին, որ կարող էին առանց դժւարութեան զարնել ու գրաւել նաև այդ միջնաբերդը։ Բայց նրանք չ'արեցին, այլ սպասեցին, որ բերդի հրամանատարը ինքն անձնատուր լինի.. „Նա խելացի մարդ է, գիտէ, որ դիմադրութիւնը ապարդիւն է։ Ինչո՞ւ զուր տեղը մարդկային արիւն թափել... ռուս յեղափոխականի բարքերը չեն թոյլ տալիս այդ“...

Եւ սպասեցին, սպասեցին... մինչև բերդի հրամանատարին օգնութեան հասաւ բռնապետութեան „Սլավա“ զրահանաւը և արագ ռմբակոծութեամբ ստիպեց յեղափոխականներին... անձնատուր լինել...

„Բոլոր ապստամբութիւնների մէջ—շարունակում է ս.-ր. յօդւածագիրը—յեղափոխականները խնայում էին թշնամուն և աշխատում խաղաղ ճանապարհով, համոզելով միացնել իրենց, մինչև որ թշնամին գալիս էր հրացանազարկ անում նրանց և խեղդում ապստամբութիւնը“...

Տոլստոիզմը—ամենուրեք...

„Յեղափոխականների այդ անտեղի վեհանձնութիւնը այնքան շատ վնասներ է հասցրել ապստամբութիւնների

ժամանակ—որ ապագայում պէտք կը լինի հրաժարուել նրանից։ Իւրաքանչիւրը գիտէ այն պարզ ճշմարտութիւնը՝ որ յարձակողի դիրքը միշտ և ամեն պարագայում աւելի ձեռնտու է, նպաստաւոր. իսկ մենք մոռանում էինք այդ և տալիս էինք յարձակողական դիրքը՝ թշնամուն“...

Բաւական է։ Այդքան խոստովանութիւնները բաւականաչափ պերճախօս ու համոզիչ են։ Մերկանգամ պատկերանում է մեր աչքերին ռուս յեղափոխականների արտասուելի կրաւորականութիւնը, պասսիվիզմը, որ սահմանակցում է լիակատար անճարութեան, անկարողութեան հետ։

Զարմանալի չէ, որ մասսային ըմբոստացման բոլոր փորձերը „վիժել են անարգօրէն, ամօթալիօրէն“։

Ո՞րտեղ է ելքը։

Ռուս յեղափոխականները պիտի սկսեն... սկզբից։ Այդպէս է ներշնչում և յորդեածագիրը։

Ռուս սոցիալիստները պէտք է սովորեն լինել նախ—յեղափոխական։ Նրանք պէտք է մարզուին այն անհրաժեշտ զինուորական արհեստի մէջ, որի բովից անցել են բոլոր յեղափոխական ժողովուրդները։

Չէնք չը կայ, զինուորական խմբեր չը կան երկրի մէջ, զէնք բանեցնող էլ չը կայ—անգամ առաջապահ շարքերում։ Չը կայ և յեղափոխական օֆիցէրութիւն։ Չը կայ երկու պատճառով։ Նախ՝ որովհետև ռուսական յեղափոխութիւնը կրելով սոցիալական-ժողովրդական բնաւորութիւն, իսկ օֆիցերութիւնը պատկանելով առանձնաշնորհեալ դասակարգերին՝ երկու տարրերը հակամարտ են. ռուս օֆիցերը չի համակրում ռուս սոցիալիստին։ Խրամատ կայ երկուսի միջև։ Եւ բռնակալութիւնը իր կողմից միշտ աւելի և աւելի մեծացնում է այդ խրամատը, տալով օֆիցերական դասակարգին միանգամայն առանձնաշնորհեալ դիրք զօրքի մէջ, ընտրելով զինուորական բարձր ու վարիչ տարրերը միանգամայն „յուսալի“ շրջաններից։

Միւս կողմից՝ ինքը ռուս յեղափոխականը ևս ընդհանրապէս դժկամակութեամբ է մտնում օֆիցերական շրջաններին... որովհետև նա „զուտ սոցիալիստ կամ սոց.-դեմոկրատ“ է և չի ուզում „մթնացնել պրոլետարիատի ու աշխատաւորութեան դասակարգային գիտակցութիւնը“, մտնելով առանձնաշնորհեալ „բուրժուա“ օֆիցերներին։ Նրանք գերադասում են պրոպագանդը զինուորների մէջ... Դա միանգամայն համաձայն է „ծրագրին“։

Բայց լսկ զինուորներով էլ, տարաբախտաբար, յեղափոխութիւն անել չի լինում։ Կոյր, քարացած կարգապահութեան ուժը վճռական վայրկեաններին՝ մղում է նրանց դէպի հնազանդութիւն իրենց շէֆերին, որոնց հրամանը և կատարում են տարերային աճապարանքով։

Ի՞նչ անել ուրեմն...

Պատրաստել բուն ժողովրդական բանակ, ձուլել մարտական խմբեր, վարժեցնել նրանց զէնքի գործածութեան և որ գլխաւորն է — ստեղծել սեփական օֆիցերութիւն, պատրաստել վարիչներ, զինուորական հրամանատարներ բուն յեղափոխական շրջաններից, որոնք կը կարողանան գալոց շարժումների ընթացքում գրաւել նաև պետական զինուորների լեգէոնները և կենտրոնացնել միևնոյն ընդհանուր, համաժողովրդական ըմբոստացման դրօշակի տակ։

Ուշ քան երբէք... Այդպէս են քարոզում այսօր մի շարք ռուս գործիչներ, սոց.-յեղափոխական և սոց.-դեմոկրատ, բոլոր նրանք—սակաւաթիւ, տարաբախտաբար—որոնք տակաւին չեն „մշակուած“ թէօրիական ու դոգմային ճոռոմաբանութեան թոյնով և գիտեն զգաստ աչքով նայել սարսափելի իրականութեան վրայ։

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ՏԵՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ *)

(Մեր աշխարհահայեացքի հիմքերը)

IV

„Յաւիտենական պատերազմի“ թէօրիան չի մնում կանգուն։

Իրտ ուժի և վայրագ էգօիզմի թագաւորութիւնը նազելու է հետզհետէ մեր բազմարկած աշխարհում—իրաւունքի ու համերաշխութեան մեծ ուժը շեշտելու է հետզհետէ։

Մարդկային հասարակական զարգացումը, լինելով հանդերձ անասնականի շարունակութիւնը, միանգամայն տարբեր է այդ վերջինից. մարդիկ, իբրև կամքով ու գիտակցութեամբ օժտուած էակներ, իբրև յարաժամ արտադրող և յարաժամ յեղաշրջող ազդակներ, կոչուած են միշտ աւելի և աւելի բարձրանալու տիեզերական ալէծուփ միջավայրում, միշտ աւելի և աւելի ազատուելու արտաքին ու ներքին ուժերի բռնաւոր կապանքներից, կոչուած են ի վերջոյ միահեծան տիրանալու՝ թէ բնութեան տարերքներին և թէ իրենց սեփական պատմութեան, ճակատագրի խաղերին։

Գոյութեան կռիւը անհատների, հասարակութիւնների, ազգերի և ցեղերի միջև՝ կորցնելու է աստիճանաբար իր դաժան բնաւորութիւնը, փոխելու է աստիճանաբար իր հոսանքի ուղղութիւնը, խտանալու է մի հսկայ, յարաճուն, հումանիստական յորձանքի մէջ, ընդդէմ միակ թշնամու—Բնութեան։

Այդ գերագոյն յորձանքի մէջ ամբողջ մարդկութիւնը, ազատագրուած միանգամ ընդմիշտ դասակարգային արիւնոտ բաղխումներից, կաստային առանձնաշնորհումից և նրա հետ կապուած բիւրաւոր անիրաւութիւններից ու արատներից, պիտի համակուի ի վերջոյ ալտրուիզմի և եղբայրութեան աշխարհաշէն դաւանանքով, պիտի հրաժեշտ տայ իր ներկայ բաժան-բաժան, պառակտեալ վիճակից, պիտի միանայ համաշխարհային մի ներդաշնակ, ամբողջական գերդաստանում, որ պիտի կոչուի—Սոցիալիզմ։

Ահա մի քանի հիմնական թեզիսներ, որ ցիր ու ցան շօշափեցինք մեր նախորդ յօդուածներում, որ հարկ է այժմ զարգացնել, ընդարձակել։

Խօսեցինք „սոցիալական դարվինիզմի“ և մալթուսեան

*) Տես «Դրօշակ», 1911 № 1:

հիպօթէզի, ենթադրութեան մասին։ Երկուսն էլ յանգում են նոյն յոռետես եզրակացութեան։ Երկուսն էլ հռչակում են, որ գոյութեան պայքարը, լինելով ընդհանուր տիեզերական „անդրդուելի“ մի օրէնք, պէտք է յաւէտ թագաւորէ և մարդկային հասարակութիւնների ծոցում, բորբոքէ յաւիտենօրէն նիւթական, շահադիտական մրցակցութեան տենդը, պիտի բաժնէ մարդկանց հակամարտ բանակների, արտօնաւոր ու իրաւազուրկ դասակարգերի, հարուստների ու աղքատների, իշխողների ու հպատակների, հզօրների և թոյլերի։

Իսկ մալթուսեան թէօրիան, առանձնապէս դժնդակ ու լալկան, մարգարէանում է, որ պատերազմը, իր բոլոր կոշտ, բարբարոս ձևերով, մարդասպանութեան, մանկասպանութեան պատուհասը, համաճարակ հիւանդութիւնները իշխելու են անվերջ, ճակատագրական անհրաժեշտութեամբ, եթէ մարդիկ սանձ չը դնեն իրենց սեռական բնազդին, չը սահմանափակեն որդեծնութիւնը, չը զսպեն ազգաբնակութեան աճումը... Որովհետև, ասում է նա, ապրուստի միջոցները համեմատաբար շատ սուղ են և բնութեան սեղանի շուրջը տեղ չը կայ բոլորի համար։

Ասացինք — այդ բոլոր յոռետես զառանցանքները, բարեբախտաբար, չեն համապատասխանում իրականութեան։

Գոյութեան կոշտ, վայրագ կռիւը մարդկանց միջև ճակատագրական անհրաժեշտութիւն էր այն նախնական ժամանակներում, երբ չը կային տակաւին արդիւնագործութեան մշակած գործիքներ, երբ մարդու ապրուստի միակ աղբիւրը ազատ բնութիւնն էր, իր ջրերով ու անտառներով, երբ նրա էական պարապմունքներն էին՝ որսորդութիւնը, ձկնորսութիւնը, նահապետական խաշնարածութիւնը և նահապետական երկրագործութիւնը։ Մարդու կախումը բնութեան հանդէպ՝ կատարեալ էր, նա միանգամայն ենթակայ էր — իր խոպան, անզօր գործիքներով — այդ բնութեան քմահաճոյքին և խիստ դժուարութեամբ էր հայթայթում իր ապրուստը։ „Այսօրը“ նրա համար տաժանելի էր և թշուառ, իսկ վաղուան օրը — անյայտ, անապահով։

Ապա դերերը սկսում են հետզհետէ փոխանակուել։ Գործիքները հետզհետէ մշակւում, կատարելագործւում են, մարդկային իմացականութեան աստիճանական զարգացման հետ։ Եւ դրանով միշտ աւելի և աւելի աշխատաւոր ու արդիւնագործող մարդկութիւնը իր սեփական տիրապետութեանն է ենթարկում վաղեմի ըմբոստ ու ահարկու բնութիւնը։

Մարդկային իմացականութի՞ւնը... Ո՞րտեղից է գալիս նա — այդ հզօր, ամենայաղթ գործօնը — ի՞նչ ուժերի շնորհիւ է նա զարգացել, կատարելագործուել այն վաղեմի դարերի մէջ և իր հերթին աստիճանաբար հպատակեցրել շրջապատող բնութիւնը, ստեղծագործել պատմութիւնը...

Մի մեծ կնճիռ... Գուցէ մեծագոյնը հասարակագիտական կնճիռներից — որի լուծումը փնտրելու է... ոչ „տնտեսական“, այլ „բնական“ կամ „բնագիտական“ մատերիալիզմի մէջ։

Կենդանական իւրաքանչիւր մի տեսակ, իր միջավայրին յարմարուելու, գոյութեան կռիւը յաղթանակով ժղելու և սերնդէ-սերունդ շարունակուելու համար՝ զարգացնում, մշակում է իր մէջ յատուկ զէնքեր։ Մէկը աճեցնում է իր ֆիզիկական ուժը, միւսը իր ճկունութիւնը, երրորդը՝ իր ճանկերը, չորրորդը՝ իր ժանիքները, հինգերորդը՝ իր տեսողութիւնը, վեցերորդը՝ իր հոտառութիւնը և այլն։

Հասարակական կեանքով ապրող կենդանիների գլխաւոր զէնքն է հէնց իրենց այդ հասարակական կազմակերպութիւնը, միութեան, համերաշխութեան կապը։ Դրա շնորհիւ է, որ տեսակները կարողանում են նւաճել — ընդհանուր բարօրութեան համար — այս կամ այն առաւելութիւնները, յառաջադիմում, բարձրանում են գոյութեան կռիւի սանդուխի վրայ։ Մենք արդէն ասել ենք, որ գոյութեան կռիւի հետ միասին կայ կենդանական աշխարհում նրա հակոտնեան — համերաշխութիւնը կամ փոխադարձ օգնութիւնը։ Համերաշխութիւնը՝ յայտնի կենդանական տեսակների շրջանակներում — ընդդէմ բոլոր արտաքին ազդակների։

Հասարակայնութիւնը — *sociabilité* — հանդիսանում է, ուրեմն, ուժեղ զէնք և գրաւական տեսակների առաջադիմութեան, բազմացման։ Որքան աւելի ուժեղ է կապը կենդանական մի համախմբումի մէջ, որքան աւելի կատարեալ է անդամների մէջ փոխադարձ օգնութեան, համերաշխութեան, ներդաշնակութեան բնազդը, այնքան աւելի զօրաւոր է հաւաքական գոյութիւնը, տեսակը, այնքան աւելի նա շանս ունի յաղթանակելու և յարատևելու։

Մարդը մէկն է հասարակական կենդանիներից։ Ամենաբարձրը, ամենուժեղը։ Եւ նա դարձել է ամենուժեղը, շնորհիւ այն հանգամանքի, որ ամենից աւելի է կարողացել զարկ տալ իր հասարակական բնազդին, իր ընկերական կազմակերպութեան... Եթէ մարդկային տեսակը թառել է անասնական սանդուխի գագաթին, դրա հիմնական պատճառներից մէկն այն է, որ գոյութեան յարատև պայքարի մէջ շեշտուել մարդկային զատ-զատ համախմբումների կամ հասարակութիւնների ծոցում (օրդայի, ցեղի, գենսի, ազգի մէջ և այլն) անդամների համերաշխութեան կապը, ամրապնդուել է փոխադարձ աջակցութեան կամ գործակցութեան (կօօպերատիօն) բնազդը, որ եղել է նոյնքան ծանրակշիռ մի ազդակ հասարակական էւոլիւցիայի մէջ, որքան իր հակոտնեան՝ գոյութեան կռիւը։ Այդ վերջինը երբէք չի եղել բացարձակ, համատարած, համայնաջինջ, նա չի եղել „կռիւ բոլորի ընդդէմ բոլորի“, այլ նա ունեցել է որպէս հակակշիռ — համերաշխութիւնը՝ իւրաքանչիւր կենդանական տեսակների սահմաններում։

Այդ համերաշխութեան կամ ընկերականութեան բնազդը ամենից աւելի յատուկ է մարդկային տեսակին և այդ բնազդի հետևանք կարելի է համարել մարդկութեան լաւագոյն նւաճումները, նրա հզօրագոյն զէնքերը իր դժնդակ գոյամարտի մէջ, ընդդէմ բնութեան, անասնութեան։

Ո՞րն է ամենամեծը այդ զէնքերից։

— Իմացականութիւնը։

Իսկ ի՞նչ է իմացականութիւնը (նաև լեզուն ու այլ մարդկային յատկանիշները), եթէ ոչ ծնունդ

նոյն ուժեղ հասարակական տենչի, նոյն ընկերական և ձգողական զօրութեան… Կղզիացած մարդը մարդ չէ, այլ ապուշ, անընդունակ մտածելու։ Կղզիացած երբեք էլ չեն էլ ապրել մարդիկ,—ապրել են միշտ հօրդաներով, համայնքներով։ Անջատեցէք նորածին մարդանհատին այդ հօրդայից, համայնքից, կտրեցէք իսպառ ամեն հաղորդակցութիւն նրա և այդ համայնքի միջև ձգեցէք ի սաստ բնութեան — նա կը դառնայ մի դժբախտ, անճարակ գոյութիւն, մի որոճող, մի կենդանի։

Հասարակական, ընկերական մշտնջենաւոր շփումների մէջ է, որ զարգանում է լեզւի հետ՝ իմացականութիւնը, բանականութիւնը։

Այդ յատկութեամբ է մարդը զատւում անասնական թագաւորութիւնից։ Դրանով է նա իշխում բնութեան վրայ։ Բանականութիւնը յատուկ է անտարակոյս, և որոշ անասնական տեսակներին։ Նա զարգացել է աստիճանաբար և տարբերութիւնները աստիճանի մէջ են, ոչ էութեան։ Համեմատեցէք բարձրագոյն կենդանիներին ստորագոյն կամ նախնական մարդկանց հետ։ Տարբերութիւնը մեծ չէ։ Տրամաբանում է և կապիկը, և շունը և ուրիշ շատ կենդանիներ։ Տրամաբանում են նրանք երբեմն աւելի ճիշտ, աւելի ուժեղ, քան շատերը մեր նմաններից։

Բայց և այնպէս ընդհանուր առմամբ բանականութեան, գիտակցութեան արտայայտութիւնները այնքան թոյլ են համեմատաբար, անասնական աշխարհի մէջ, որ կարելի է ասել, անդունդ կայ մարդու և կենդանիների միջև։

Այնտեղ՝ բնազդն է, այստեղ՝ խորհող, վերլուծող, իմացականութիւնը։ Այնտեղ՝ այդ բնազդը չի կարողանում հակազդել միջավայրի ձախորդութիւններին, հարւածներին, այստեղ՝ այդ իմացականութիւնը դառնում է հզօր, ամենակարող մի լծակ, որ յաւակնում է սասանեցնել տիեզերքը։ Անասնական բնազդն էս իմացականութիւն է, բայց սառած, քարացած։ Մարդկային իմացականութիւնն էս բնազդ է, բայց յաւէտ շարժողութեան, լինելութեան արգասաւոր ընթացքի մէջ։ Անասնական բնազդը չի կարողանում գործիք շինել ու բանեցնել, նա ունի միայն ոտքեր, թաթեր ու ճանկեր. ունի թոյն ու կնճիթ, ունի կտուց, ժանիքներ։ Դիտել են միայն, որ երբեմն բարձր, մարդանման կապիկները գործ են ածում քարեր կամ դագանակներ — մի ձող կամ մի կոճղ—իրենց կուի, յարձակումների միջոցին, ընդդէմ իրենց թշնամիների։ Դրանից հեռու չի գնում գործիքների կիրառումը կենդանական աշխարհում։

Մարդը միակ կենդանին է, որ գիտէ գործիք շինել ու բանեցնել։ Մարդը չունի ոչ փղի ու առիւծի ֆիզիքական ուժը, ոչ վագրի ճարպկութիւնն ու ժանիքները, ոչ արծւի տեսողութիւնը և ոչ շան հոտառութիւնը։ Բայց իր դաժան, յաւիտենական կուի մէջ, բնութեան ծոցում, միլիօնաւոր տարիների ընթացքում— նա մշակել էր իր աննման զէնքը — Ուղեղը։ Այդ ուղեղի զօրութեամբ նա յղացել է գոյութեան կուի այլ միջոցներ, մեթօդներ։ Նա յղացել է բիւրաւոր գործիքները, որոնք, ըստ Դարվինի, շարունակութիւն են մարդկային ձեռքերի։

Գործիքները եկան փոխարինելու մարդու պակասաւոր անդամներին։ Նրանք եկան երկարացնելու նրա թաթերը, սրելու նրա տեսողութիւնը, բազմապատկելու նրա ֆիզիքական ուժը, ճարպկութիւնն ու ճկունութիւնը։ Այնտեղ, ուր չը հասաւ նրա թոյլ բազուկը, նա մեկնեց իր ահաւոր գործիքը։ Եւ դրանով տէր դարձաւ բնութեան. և դրանով աստիճանաբար յեղաշրջեց երկրագունդը և իր սեփական ճակատագիրը։

Այդ գործիքների խաղով է բացատրում Կարլ Մարքսը ամբողջ մարդկային պատմութեան ու քաղաքակրթութեան ընթացքը. և ճշմարտութեան մեծ բաժին կայ այդ „մատերիալիստական“ յղացման մէջ… Հարկ է, սակայն, չը նսեմացնել այդ գործիքներն արտադրող և յարաժամ փոփոխող, կատարելագործող ազդակը—մարդկային գիտակից, նպատակաւոր իմացականութիւնը։

Այդ նսեմացումը կատարեալ է՝ մարքսիզմի որոշ իդէօլօգների գրուածքներում։ Տարւած „մօնիզմի“ հրապուրանքով, նրանք ձգնում են վերածել մարդկային բովանդակ պատմութիւնը մէկ միայնակ ու հիմնական պատճառի—տնտեսական գործօնի խաղերին։

Եւ մարքսիզմը յանձին այդ խանդավառ, յափշտակւող թէօրետիկոսների, զարնւում է — տարբեր ճանապարհով—նոյն վտանգաւոր տարերայնութեան դօգմի մէջ, որով համակւած են մեր ցուցադրած „օրգանական թէօրիայի“ կամ „սօցիալական դարվինիզմի“ ռահվիրաները և մեծագոյնը նրանցից՝ Հերբերտ Սպենսեր։

Սպենսեր և Մարքս, արդարև, հակոտնեաներ են՝ մի կողմից և համախոհներ՝ միւս կողմից։ Մէկը գերազանցապէս անհաւասարութեան իդէօլօգ է, միւսը՝ հաւասարութեան։ Բայց երկուսն էլ կոչ են անում օբ'եկտիվ, առարկայական էւօլիւցիային, երկուսն էլ այսպէս թէ այնպէս դրժում են մարդկային ենթակայական միջամտութիւնների ու հակազդեցութիւնների ուժն ու արգասաւորութիւնը պատմական պրօցէսի մէջ, երկուսն էլ — եթէ մեզ թոյլ տրւի այս արտայայտութիւնը— „տարերայնականներ“ են։

Մարդ-ազդակը պատմութեան վիթխարի, յաւերժահոս պրօցէսի մէջ՝ նրանց ասելով՝ ոչինչ է կամ գրեթէ ոչինչ։ Նա չի ազդում, չի հակազդում այդ պրօցէսի ոչ ուղղութեան, ոչ էութեան վրայ, նա ինքը ենթարկւում է, որպէս ծառայ, սպասաւոր՝ օբ'եկտիւ էւօլիւցիայի օրէնքներին, որոնք միակ տէր ու հրամանատար են։ Օբ'եկտիվ էւօլիւցիան, իրերի ու երևոյթների առարկայական զարգացումը ընթանում է իր ճանապարհով, անկախ մարդկային կամեցողութիւնից, իմացականութիւնից, միջամտութիւնից։ Այդ միջամտութիւնը՝ ըստ Սպենսերի, նոյնիսկ անմիտ ու վնասակար է, քանի որ նա նպատակ ունի խանգարելու բնութեան ընթացքը, արգելք դնելու այդ բնութեան ազատ խաղերին, թոյլ կանգնելու գոյութեան. կուի ու բնական ընտրութեան տիեզերական յորձանքի առջև… Իսկ դա աբսուրդ է, անհեթեթութիւն։ „Laissez faire!“… „Մի՛ միջամտէք“… Բնութիւնն ինքը տնօրինել է ամեն բան խելացիօրէն, բանականօրէն։ Բնութիւնն ինքը գծել է միանգամ ընդմիշտ մարդկային առաջադիմութեան ուղին… Այդ առաջադիմութիւնը, այդ „պրօգրէսը“ կատարւել է միշտ և կատարւելու է ապագայում էս՝ գոյութեան կուի նշանակի տակ… Լինելու են միշտ դասակար-

գային հակամարտութիւններ, առանձնաշնորհումներ, անհաւասարութիւններ, տիրապետութեան տենչանքներ, լինելու են միշտ ընտրեալներ, իշխողներ ու ստորադրեալներ... Եւ այդ հակամարտ ուժերի յաւիտենական մրցումով է, որ սահելու է առաջադիմութեան մեծ անիւը... Այդպէս է ազատ բնութեան ծոցում, այդպէս է նաև մարդկային հասարակութեան մէջ, որ ապրում է տիեզերքում, որ հետևապէս ենթակայ է նոյն համատարած տիեզերական Դէտերմինիզմին, պատճառականութեան...

Մարքսը չի ասում՝ „Laissez faire!“։ Նա չի քարոզում Սպենսերի պէս, որ մարդիկ, պետութիւնները, պարլամենտները ձեռնպահ մնան, չը խանգարեն գոյութեան կռիւի բնական ընթացքը, չ՝աշխատին — պետական օրէնքներով, սոցիալական ռէֆորմներով — բարձրացնել ճնշուած, հարստահարուած դասակարգերին, — ըստ Սպենսերի—թոյլերին, „բնութեան հալածեալներին“, „յարմարուելու անընդունակներին“... Մարքսն ինքը դեռ երիտասարդ հասակից հրաժարիմք ասաց „ձեռնպահութեան“, չէզոքութեան այդ ինքնակար քարոզներին և իր ուժեղ անձնաւորութեան բոլոր թափով մխեց պատմական անցքերի շարանի մէջ, որպէս կամքոտ, նպատակաւոր, հակազդող ու յեղաշրջող մի գործօն, որ եկել էր իր դրոշմը հաղորդելու էւոլիւցիայի գահավիժող ալիքներին, ուղղելու պատմութեան անիւը դէպի մարդկային հաւասարութիւն, դասակարգերի ու առանձնաշնորհումների վերացում։

Եւ սակայն .. մարքսիզմը en bloc եղաւ ջատագով տարերայնութեան, մարքսիզմը իբրև հասարակագիտական վարդապետութիւն, նսեմացրեց անհատի դերը, անգամ մեծ անհատների, ռէֆորմատորների դերը, նսեմացրեց... վտարելու չափ։ Պատմութեան անիւը, ըստ մարքսիզմի, տանում է արդէն դէպի հաւասարութիւն ու եղբայրութիւն, իրերի ու երևոյթների էւոլիւցիան—տնտեսական ուժերի մղումով — գնում է արդէն և ճակատագրօրէն դէպի իդէալական կոմունիզմը, միանգամայն անկախ, մարդկանցից, իդէոլոգիական, գաղափարական գործօններից։ Այդ վերջինները՝ միջամտեն թէ չը միջամտեն – միևնոյն է... արդիւնաբերական յարաբերութիւնների էւոլիւցիան, դասակարգերի մշտնջենաւոր յաջորդութիւնը ուղեկցելու են մեզ տարերայնօրէն—հեգելեան հակադրութիւնների օրէնքով, Դիալեկտիկայի յաւերժական հոլովումներով—դէպի սոցիալիզմ...

Այդտեղ է մարքսեան թէօրիայի ամենախոշոր և անդարմանելի վրիպումներից մինը։

Տարերայնութեան այդ հաւատամքը մենք գիտեցինք իբրև վտանգաւոր։ Նա „վտանգաւոր“ է տեսականապէս, քանի որ չի համապատասխանում պատմական իրականութեան, խեղաթիւրում, այլակերպում է այդ իրականութիւնը։ Նա վտանգաւոր է և գործնականապէս, քանի որ տարերայնութեան այդ դօգմը յաճախ կաշկանդում ու խանգարում է „հաւատացեալների“ ձիգերը, նրանց կամքի ու ինիցիատիվի թռիչքները... Մարքսիզմն ունի իր հաւատացեալների ամենաստուար լեգէօնները Գերմանիայում ու Ռուսաստանում — և այդ երկու երկրներում էլ ամենից աւելի է շեշտւում, յեղափոխական, ընդդիմադիր բանակի մէջ, „խիզախ թռիչքների“ բացակայութիւնը...

Կանգ առնենք, փոքր ինչ աւելի, այդ տարերային վարդապետութեան վրայ։ Նա ունի մեծ առաւելութիւն մի շարք նախընթաց սոցիոլոգիական թէօրիաների հանդէպ։ Եւ նախ այն առաւելութիւնը՝ որ նա զուտ հասարակագիտական թէօրիա է, այսինքն ձգտում է բացատրել հասարակութիւնների զարգացումը հասարակական պատճառներով։ Նա չի փոխադրում օրգանաւոր և անշունչ տիեզերքի օրէնքները մարդկային պատմութեան մէջ։ Ոչ. այդ պատմութիւնը իր ուրոյն զարգացումն ունի, որ նման չէ բնութեան պրոցէսին։ Նա ունի իր յատուկ դասակարգային կռիւները, որոնք տարբեր են տիեզերական „գոյութեան կռուից“։

* * *

Բնութիւնը յար և միշտ յեղաշրջուում, կերպարանափոխուում է — և այդ գործօն, տիրական, յեղաշրջող ուժն է մարդկային իմացականութիւնը, որ ճանաչելով բնութեան օրէնքները, սովորում է յաղթահարել նրանց։ Վաղը նա կը ճանաչէ կատարելապէս նաև մարդկային պատմութիւնը կառավարող օրէնքները և կը յաջողէ աստիճանաբար սանձել նրանց աւերածները, յաղթահարել ներքին թշնամի ազդակներին։

Այդ յեղաշրջող մարդկային ուժը անհունապէս աճում, բազմապատկուում է մարդ-անհատների ու հասարակութիւնների համերաշխութեամբ, գործակցութեամբ։ Այնպիսի հսկայ յեղաշրջումներ, ինչպէս օրինակ, Սուէզեան ու այլ ջրանցքները, երկաթուղային վիթխարի ցանցերը, Սեմպլոնի ու Գոթարդի խոլական տուներները, հնարաւոր եղան այդ համերաշխ, արդասաւոր գործակցութեամբ։ Մինչև օրս իմացականութեան հրաշալի ուժը պրպտում էր ովկիանների անհունութեան մէջ, փորփորում էր բարձրաբերձ լեռնային կատարները, թռչում էր կայծակի արագութեամբ աշխարհի մէկ ծայրից միւսը, տարածելով մտքի ու արդիւնաբերութեան գանձերը. մինչև օրս շոգին, ելէքտրականութիւնն ու լոյսն էին, որ ի շարս այլ ուժերի, շահագործում էր մարդկային հանճարը. իսկ այսուհետև նա կը սլանայ և երկնային տարածութիւնների մէջ, իր յօրինած արագաթռիչ օդանաւերով. այսուհետև նա կը կարողանայ աստիճանաբար յաղթահարել ու շահագործել նաև քամիների, հողմերի, ուրագանների ուժը... և դեռ քանի ուրիշ ուժեր—անյայտ ու խորհրդաւոր—որ մրափում են բնութեան ծոցում, սպասելով նոյն հանճարի խորաթափանց ու համայնագիտ պեղումներին...

Ի՜նչ խղճալի տեսք են առնում այդ տիտանեան նաւաճողական արշաւների հանդէպ՝ սպենսերիանիզմն ու մալթուսականութիւնը... Մարդ-էակը բնաւ արժանի չէ անսալու սպենսերական դժնդակ հրամանին, համակերպելու բնութեան ահեղ օրէնքների առջև, փնտրելու իր առաջադիմութիւնն ու բարգաւաճումը „գոյութեան կռուի“ ու բնական ընտրութեան հովանիի տակ։ Մարդ-էակը միւս կողմից բնաւ տրամադիր չէ ականջ դնելու և մալթուսեան պատգամներին, զսպելու, անդամալուծելու իր մարդկային էութեան այս կամ այն ախոր-

ժակը, նա տրամադիր չէ կրճատելու հակաբնական միջոցներով իր տեսակի բեղմնաւորումը, ազգաբնակութեան աճումները... Ամենևի՜ն։ Մարդկանց, ժողովուրդների բազմացումը չը պէտք է վախեցնէ մեզ. ընդհակառակը. նա մի գրաւական է պրոգրէսի, առաջադիմութեան։ Նա եղել է այդպիսի գրաւական և անցեալում։ Քաղաքակրթութիւնը սովորաբար ծնել ու փթթուել է այն վայրերում, ուր եղել է խիտ ու բեղուն ազգաբնակչութիւն։ Եթէ անգամ իրաւացի է Մալթուսը, եթէ անգամ ապրուստի միջոցները մինչև օրս աճել են համեմատաբար այնքան թոյլ չափերով, թեաբանական պրոգրեսսիոնով — դարձեալ անհանգստանալու տեղիք չը կայ։ Մաշինիզմը, գիտերը, արդիւնագործութիւնը այնպիսի հսկայ սլացքով են առաջադիմում, որ այդ ապրուստի միջոցները այսուհետև պիտի բազմապատկուին անսահմանօրէն, թեաբանական պրոգրէսսիոնը թերևս պիտի վերածուի գէոմետրիական։

Երկիւղ չը կայ մարդկանց աճելութիւնից, երկիւղ չը կայ և համաճարակներից ու պատերազմներից։ Ո՞վ կարող է ասել, Մալթուսի և այլ ռազմամոլ գիտուններին պէս, թէ պատերազմի կարմիր մղձաւանջը յաւիտենական է, ճակատագրական։ Ո՞վ կարող է պնդել մեր օրերում լուրջ, բանաւոր պատճառաբանութեամբ, թէ ազգերի պարբերական յօշոտումները և նրանց ուղեկցող բռնակալական ու բուրժուական խրախճանները անհրաժեշտ գրաւական են մարդկութեան առաջադիմութեան, թէ պատերազմը նաև դպրոց է մարդկային վեհ առաքինութիւնների, արիութեան ու հերոսութեան, վեհանձնութեան ու ասպետական անձնուրացութեան ևն ևն։ Դրանք ափիոնի ընդարմացուցիչ գոլորշիներ են, որ մատուցանում են բուրժուազախոհ սոցիոլոգները տառապեալ ու հալածական ժողովուրդներին։ Ո՞վ չի տեսնում, որ պատերազմները հետզհետէ սակաւանում են, որ աճում են և բազմանում նրա հանդէպ ամեն կարգի պատնէշները—խաղաղութեան միջազգային դաշնակցութիւններ, իրաւարար ատեաներ, յարաճուն մամուլ ու գրականութիւն ի նպաստ նոյն խաղաղութեան և ամենից առաջ՝ խաղաղատենչ ու բազմամիլիոն սոցիալիստական բանակ...

Ապագան չը պիտի նմանի անցեալին։ Անցեալում, այո՛, պատերազմը խաղացել է դրական դեր — ինչպէս ցոյց տուին նախորդ էջերում՝—նա խթանել է քաղաքակրթութիւնը, զարկ է տուել ազգերի գոյացման, մեծ պետութիւնների կազմաւորման։ Անցեալում կապիտալիզմը ևս — շահագործող, հարստահարիչ դրամապետութիւնը—խաղացել է քաղաքակրթիչ, շինարար դեր, ծաւալել է ամբողջ ժամանակակից բուրժուազական քաղաքակրթութիւնը, որ սակայն այժմ թեքուում է արդէն դէպի վերջալոյս... Անցեալում՝ անգամ միահեծան բռնապետութիւնը — այդ սև, մարդատեաց, կործանիչ ուժը—կատարել է որոշ ժամանակ օգտակար ու աշխարհաշէն մի պաշտօն, լափելով, ոչնչացնելով մի այլ աւելի բարբարոս ուժ—ֆէոդալական անարշիկ բասը— և ձուլելով ժողովուրդներին մի ընդհանուր յարկի տակ, ուսկից աւելի դիւրին էր այդ ժողովուրդների համար՝ մշակել իրենց զէնքերը և ուղղել նրանց բոլոր բռնաւոր ոսոխների դէմ...

Անցեալն է անց։ Երբեմն օգտակար այդ հաստատութիւնները մանել են արդէն իրենց կեանքի թելը, նրանք մի մի ահարկու բեռ են մարդկութեան համար, մաշող, ստրկացնող, արիւնոտող... Հասարակական էւոլիւցիան, միշտ աւելի և աւելի տոգորուելով արդարութեան ու մարդկայնութեան հաւատամքով, դուրս է նետում այդ պատմական դիակները կամ դիակնացող գոյութիւնները իր հսկայ աւազանից։ Պատերազմի Արևը խաւարում է կամաց-կամաց, միապետութեան ու կապիտալիզմի արևի հետ։

Մենք չենք, որ կը ժխտենք մրցման, պայքարի արգասաւոր ու հրաշագործ ուժը։ Առանց նրան՝ չը կայ կեանք, չը կայ շարժում, առաջադիմութիւն։ Առանց նրան՝ կայ լոկ ճահիճ, խոպանացում, ամայութիւն։

Աշխոյժ կեանքն է ինձ հաճելի, մաքառում,
Եւ տատանում, թափահարում յաւիտեան
Երջանկութեան ալիքի մէջ ելէջող.
Առանց կռի մարդ ընկնում է, փճանում,
Մեղկ հանգիստը գերեզմանն է արիութեան...

Անշո՜ւշտ։ Բայց մեծ, դեմոկրատ բանաստեղծը — Շիլլեր — „կռիւ“ ասելով, չի հասկանում անպատճառ պատերազմ, արիւնհեղութիւն և փոխադարձ յօշոտում...

Կռիւ է և „մրցումը“, կռիւ է և գաղափարների, դաւանանքների մոլեգին ըմբշամարտը։

Գոյութեան կռիւ—այո՛։ Բայց՝ դրսում, ոչ ներսում։ Ոչ մարդկանց ու դասակարգերի, ոչ ազգերի ու ցեղերի մէջ, այլ մարդկութեան ու բնութեան միջև։

Ոչ ներսում—այլ դրսում։ Ներսում թող տիրէ խաղաղ, օրինաւոր, աշխարհաշէն մրցակցութիւնը—մրցակցութիւն հանճարների, տաղանդների, գիտունների, արուեստագէտների, փիլիսոփաների, մտքի և կրթութեան, քաղաքացիական արիութեան, հերոսութեան և բոլոր միւս առաքինութիւնների ասպարիզում։ Եւ նա կը տիրէ ժամանակով։ Իսկ դրսում՝ ամբողջ մարդկութիւնը, ներդաշնակ, եղբայրացած, դուրս վտարած իր միջից դասակարգերի և ցեղերի ոճրանիւթ բաղխումները, ատելութեան, վրէժի ստորացուցիչ բնազդները՝ պիտի ծառայեն իր հաւաքական Իմացականութեան ու կամքի բոլոր թափով—Բնութեան դէմ։

Ահաւասիկ մեր իդէալը։ Եւ էւոլիւցիան այնտեղ է տանում՝ օբ՝եկտիվ ու սուբ՝եկտիվ, առարկայական ու ենթակայական ուժերի գործակցութեամբ։

Փոքր ինչ աւելի կանգ առնենք այդ օբ՝եկտիվ և սուբ՝եկտիվ ուժերի վրայ։

ԿՈՉ

Ռուսական համալսարանների մեր ուսանող ընկերները հրատարակել են նոր շարժումների առթիւ մի թռուցիկ-կոչ, որից բաղում ենք մի բանի հատուածներ։ Կոչը ուղղուած է համայն Ռուսաստանի ուսանողութեան.

Ընկերնե՛ր,

„Կեանքը նորէն ալէկոծուեց։ Ժողովրդի թշնամիները նորէն գործի վրայ են։ Երկիրը „հանգստացնելուց“ յետոյ, Ստոլիպինեան կառավարութիւնը գահավիժում է

ռէակցիայի թեք ճանապարհով։ Նա ուղղեց նախ իր հարուածները ֆինլանդական ինքնավարութեան դէմ։ Հերթը հասաւ արևմտեան նահանգներին։ Հը մոռացուեց և Կովկասը։ Այդտեղ, անգամ վանքերի կամարների տակ՝ ամենատես դահիճները փնտրում են „ինքնավարութեան“ ու „անջատականութեան“ ուրուականը։ Խուճապը չի դադարում...

„Սոցիալիզմի և իր համհարզների համար չը կայ պատմութիւն, չը կան պատմական օրէնքներ։ Նրանք չեն ուզում տեսնել նոյնիսկ Երիտասարդ Թիւրքիան, Երիտասարդ Պարսկաստանը, հանրապետական Պորտուգալիան։ Նրանք ուզում են, որ Ռուսաստանը լինի բռնութեան միակ օվազիսը՝ ոչ միայն Եւրոպայում, այլ և Ասիայում...

„Հարուածները տեղացին և համալսարանի վրայ, անգամ լոյսալ, օրինական պրոֆէսորութեան վրայ։ Գիտութեան տաճարը դարձաւ ոստիկանների ժողովատեղ... Դեռ երբէք Ռուսաստանը չի հասել բարոյական այդպիսի անկման։

„Ընկերնե՛ր։ Յայտարարուած ընդհանուր դասադուլը միակ արժանաւոր պատասխանն է խենթացած կառավարութեանը։

„Կեցցէ՛ համառուսական ուսանողական դասադուլը... Սեղմե՛նք շարքերը և նորէն գնանք ժողովրդի մէջ՝ յեղափոխական կոչերով“։

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Փետրուար 1911 թ.

Ա Զ Գ

Հ. Յ. Դաշնակցութեան՝ Եւրոպայի Ուսանողական Միութեան Գործադիր Մարմինը, հրաւիրում է ընկերներին Համագումար ժողովի (1911 թ. ապրիլի 1-ին), ուր պիտի քննուին օրակարգի մէջ նշանակուած հետեւեալ խնդիրները.

1. Թիւրքիոյ, Կովկասի և Պարսկաստանի արդի կացութիւնը և Դաշնակցութեան բռնելիք դիրքը, ա) կուլտուրական գործունէութիւն. բ) „Հակահոսանք“. գ) Երիտասարդթիւրքերի քաղաքականութիւնը. դ) Բէակսիոնը և նոր շարժումը Ռուսաստանում. ճնշումներ և բանտարկութիւններ Կովկասում. ե) Սոցիալիստական կուսակցութիւնները Ռուսաստանում. զ) Միջկուսակցական համերաշխութիւն։

2. Եւրոպայի դաշնակց. ուսանողների յարաբերութիւնները Թիւրքիոյ, Ռուսաստանի և Ամերիկայի դաշնակցական ուսանողների հետ։

3. Եւրոպայի Դաշնակց. ուսանողների յարաբերութիւնները ռուս, թիւրք, պարսիկ ուսանողների հետ։

4. Դաշնակց. ուսանող. պրոպագանդը Եւրոպայում և գաղութներում (Բալկան, Եգիպտոս, Ամերիկա)։

5. „Ուսանող“ի հրատարակութիւնը։

6. Դաշնակց. ուսանողների աշխատակցութիւնը կուսակցական մամուլին։

7. Դասախօսութիւններ Դաշնակցութեան ծրագրի և տակտիկի շուրջը։

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Պիւրօն սպացած է՝

Ի նպաստ բանտարկեալներու.—Դ ա մ ա՛ս կ օ ս է ն՝ 30 ֆրանկ։ Ն ա ն ս ի է ն՝ Զովվարդեան 10 ֆրանկ։

Սարապի Կոմիտէն՝

1908 նոյեմբեր 1-էն 1909 նոյեմբեր 1-ը. — Հետեւեալ խումբերէ՝ Փայլակ 270 դրշ., Պեսօ 397, Մարալ 171 դրշ. 125 փ., Արշալոյս 122, Արաբօ 113, Հրակ 147, Արնին 168, Աղբիւր-Սերոբ 250, Վազգէն 159, Խան 206. 25, Քրիստափոր 183. 50, Գնունի 199. 50, Կորիւն 144, Հրացան 294, Գրիչ 384, Նեվրուզ 536, Պողպատ 189. 25, Փոքորիկ 160, Զոր վառօդ 171, Աղբիւր 60, Արծիւ 276, Բազէ 30, Եփրատ 66, Սիրամ, Շիւան եւ Արամ ճէր 90: Գումար 4786. 625 դրշ.:

1909 նոյ. 1-էն 1910 փետր. 1-ը.—Հետեւեալ խմբերէ՝ Զեփիւռ 57. 25 դրշ, Կորիւն 42, Աղբիւր 24, Աղբիւր-Սերոբ 31. 50, Արաբս 8. 50, Արծիւ 18, Վրէժ 24, Խան 63, Արշալոյս 40. 50 դրշ.: Գումար 308. 75 դրշ.:

1910 փետր. 1-էն 1910 ապրիլ 30-ը.—Հետեւեալ խմբերէ՝ Սլամ 22. 50 դրշ., Նեվրուզ 118. 50, Փարոս 14, Զեփիւռ 28, Արաբս 13, Պեսօ 112, Փոքորիկ 46, Վարդ 26, Եփրատ Մարալ 39. 50 դրշ.: Գումար 419. 50 դրշ.:

1909 յունվ. 1-էն 1910 յունվ. 1-ը.—Ժ ա յ ռ ի ենթակոմիտէն՝ Մամառոդ 334. 50 դրշ., Ցառաջ 573, Պայքար 320 դրշ.: Գումար 1227. 50 դրշ.:

Փառնակի Ենթակոմիտէն՝

1909 յունվ.-ից դեկտեմբ. 30-ը.—Հետեւեալ խմբերէ՝ Անդրանիկ 415 դրշ., Տիգրիս 570, Եփրատ 255, Վասպուրական 606, Ժիրայր 233, Սերոբ 431, Կարին 255, Ուսանող 120 դրշ.: Գումար 2885 դրշ.:

Ծովափի Տեղական Կոմիտէն՝

1909 փետրուար 1-ից հոկտեմբեր 31-ը. — Հետեւեալ խումբերէ՝ Արշալոյս 50 դրշ., Փոքորիկ II 37, Վրէժ II 187. 50, Անահիտ 40. 75, Մասիս I 42, Երկաթ 144. 25, Շանթ 162, Սլամ 404. 50, Փոքորիկ I 67. 50, Վրէժ I 265. 25, Սուլիչ 331. 50, Արծիւ I 160. 75, Նորաբոյս 207. 50, Խանթ 25. 50, Առիւծ 97. 75, Հրայր 317. 75, Կայծակ 120, Ժայռ 214. 50, Արաբս 102. 50, Քրիստափոր 95, Դեղաբափ 1177. 50, Մասիս II 112. 50. Անդրանիկ 127. 50, Քաջունի 20, Սիմէօնիա 97. 50, Զանգակ 59. Սուրհանդակ 87, Ցառաջ 150, Թռուցիկ 17. 50, Հրայր 30: Նուէրներ՝ Մանիկ 25, X· 62. 50, X. 8. 75 դրշ.: Գումար 5303. 25 դրշ.:

Պրակի Կոմիտէն՝

1908 հոկտեմբերէն մինչեւ 1909 յունիսի լրում. — Ենթակոմիտէի անդամներէն 145 դրշ.: Հետեւեալ խումբերէ՝ Առաջին 110 դրշ., Ռազմիկ 365, Ժանեակ 82, Թուքակ 64, Ընձակ 118, Գեսակ 96, Աղբակ 149. 20, Երակ 102. 20, Դաշնակ 139, Խօսնակ 93. 20, Լնակ 88, Բանակ 92. 20, Զիկզակ 132, Մշակ 118. 10, Կայծակ 120, Հայկակ 93. 20, Զորակ 110, Ծովակ 99, Ճարակ 126. 20, Պիտակ 57, Վսակ92. 20, Սիսակ 76. 20, Սասուն 91. 20, Տարօն 30, Սերոբ 69, Կարկուս 31. 20, Սազօ 49, Վազգէն 22. 20, Նեփրովք 22. 20, Փոքորիկ 55.20, Արծիւ 35, Եղօ 87, Փրփուր 35. 20, Մասիս 12, Զրահաւոր 83, Շանթ 77, Թօկօ 36, Գիսակ 24. 20 դրշ.. Անդորրագրի № 30 տեսրով՝ Սմբատի ճէրը 648, Վահէի՝ 324, Ասուպի՝ 216, Արօսի՝ 108, Շահպազի ձեռքով 1728, անդորրագրի № 76 տեսրով՝ Լուսնակի ճէրը 216, Ցուսակի՝ 162, Փարոսի՝ 216, Բագրատի՝ 864, Պսակի՝ 324, Կ. Զ.-ի՝ 540, Ց. Զ.-ի՝ 324, Կ. Գ.-ի՝ 216 դրշ.: Գումար 9317 դրշ. 30 փ.:

1909 յուլիս 1.—Հետեւեալ խումբերէ՝ Աղբակ 26 դրշ. 20 փ., Արծիւ 20, Բանակ 18, Բերդակ 14, Գիսակ 19. 20, Դաշնակ 33, Դիտակ 13. 20, Երակ 18, Եղօ 27, Զիկզակ 19, Զրահաւոր 31, Ընձակ 15. 20, Թուքակ 10. 20, Թօկօ 15, Ժանեակ 16. 10, Լնակ 32, Խօսնակ 22. 20, Ծովակ 15, Կայծակ 14, Կարկուս 9. 20, Հայկակ 13, Զորակ 13. 20, Ճարակ 25, Մշակ 24. 20, Մասիս 20, Նեբրովք 19, Շանթ 25, Պիտակ 12, Ռազմիկ 87, Սասուն 15, Սիսակ 15, Սերոբ 13, Սազօ 15, Վազգէն 23, Վսակ 15, Տարօն 13. 20, Փոքորիկ 18. 20, Փրփուր 18. 20, Հրայր 20 դրշ.: Գումար 795 դրշ. 10 փ.:

Կանանց Կ. Խաչի Մարմին՝

1909 Ապրիլէն-յուլիս 1.—Ծաղիկ 40 դրշ., Արաբս 55, Մասիս 32, Արմէն 38, Ռուպինա 36, Ակիլինէ 31, Շաքէ 19, Եփրատ 24, Տիգրիս 17, Սօսէ 15, Ոմն 6, Ոմն եւս 5 դրշ.: Գումար 318 դրշ.:

Կանանց Կ. Խաչի Պրակի Մարմին՝

Հետեւեալ խումբերէ՝ Ծաղիկ 13 դրշ., Արաբս 16, Մասիս 11. 20, Արմէն 8, Ռուբինա 14, Ակիլինէ 16, Շաքէ 10, Եփրատ 9, Տիգրիս 12, Սօսէ 12. 20 դրշ.: Գումար 122 դրշ.: